

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

**ՇԻՋԵՑԱԲ
 ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԸՆԿ.
 ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻՆ**

ՏՕՔՔ. Ա. ԳԱԶԱՆՃԵԱՆ

Ս.Գ.Հ.Կ.ը գուժեց մահը և Ելի Բան հիմնգ տասնամյակ, կուսակցության գերագույն ղեկավար դիրքերում վրայ գտնուած ընկերոջ մը՝ Ընկ. Ժիրայր Նայիրիին, որ կեանք մը ամբողջ նուիրաբերեց իր կուսակցության գաղափարախօսության ընդհանրացման, իր ժողովուրդի ազգային իտեալներու նուիրագործման պայքարին եւ հայրենիքին յառաջընթաց արշաւին:

Յետադարձ հայեացքի մը շրջագծէն ներս, յիշողութեանս պաստառին վրայ, իսկոյն յայտնուեցաւ Հաննոյ թաղին մէկ անկիւնը գտնուող ակումբի մը մէկ համեստ սենեակը, ուր՝ Նայիրիի հրաւերով իրարու կը հանդիպէին անոնք որոնք անգամ ըլլալով: Տակաւին ուսանող էի: Նայիրիի անունը լսած էի միայն. իրարու ծանօթներ չէիք. անգամ չէի գիտեր, թէ ինչու էր այդ հանդիպումը:

Առաջին իսկ առիթով, իր ուրախութիւնը յայտնեց Նայիրի, հրաւերին ընդառաջելուս համար: Ապա՝ շուտով յայտնեց ինձի, թէ Սահակեան Բարձրագոյն Վարժարանի արարական դասարանին նուիրուած արհեստական Վարդահանդէսին ունեցած ելոյթս զիմ տպաւորած ըլլալուն՝ փափաքած էր ծանօթանալ եւ բարեկամանալ հետս, նպատակ ունենալով զիս մեր ազգին ու հայրենիքին շարժաշին ծառայութեան կոչելու: Մօտ ժամ մը տեւող մեր հանդիպման ընթացքին, Նայիրի մեծ ռզնտութեամբ, անդրադարձաւ Հնչակեան ընկերվարական գաղափարախօսության, հայ ժողովուրդի յետ-Եղեռնեան պահանջատիրական պայքարի գարգացման եւ ծաղկող հայրենիք՝ Հայաստանի եւ Սփիւռքի կապերու սերտացման մասին:

Համալսարանական ուսումնաւարտելէ ետք, ներգրաւուեցայ Հնչակեան շարժելէ ներս, ուր ժողովական կարգով, նախ՝ Կուսակցութեան շրջանային Վարիչ Մարմիններէ եւ ապա՝ Կեդրոնական Վարչութիւններու անդամի հանգամանքներով, գործակցեցանք իրարու հետ տասնամյակներ ամբողջ:

Մեր առաջին հանդիպումին նկատածս, յանուն հայ ժողովուրդի եւ հայրենիքի իր ցուցաբերած նուիրումը, գաղափարական հաւատարմութիւնը, պայքարի յանդուգն ոգին՝ Նայիրի դարձուցած էր իր կեանքի կարգախօսը, զոր ոչ մէկ տարբերակի հետ պիտի սակարկէր, եւ այդ կարգախօսը իր հարազատ արտայայտութիւնը պիտի դարձնէր իր մէկ մի հանդի-

Հայաստան Այցի Ընթացքին Նախագահ Փութին Յայտարարեց՝ «Ռուսաստան Պիտի Անրապնդէ Իր Դիրքերը Անդրկովկասի Մէջ»

Դեկտեմբեր 2-ին, միօրեայ պետական այցով Հայաստան ժամանած Ռուսաստանի նախագահ Վլատիմիր Փութին վաչրէջ կատարեց Գիւմրի օդանաւակայանը, ուր դիմաւորուեցաւ նախագահ Սերժ Սարգսեանի կողմէ, սակայն արարողութիւնը փակ էր լրագրողներու համար:

Այնուհետեւ, երկու նախագահները Գիւմրիի տրամադրիկական թատրոնէն ներս մասնակցեցան Հայ-ռուսական միջտարածաշրջանային երրորդ համաժողովին:

Իր ելոյթին մէջ Սերժ Սարգսեան կարեւորեց հայ-ռուսական դարաւոր բարեկամութիւնը՝ յայտնելով այն տնտեսական առաւելութիւնները, որ Հայաստանին կը բերէ Մաքսային Միութեան անդամակցութիւնը:

«Անցել է ընդամէնը երեք ամիս Մաքսային Միութիւն մտնելու Հայաստանի մտադրութեան մասին յայտարարութեան պահից, սակայն արդէն կատարուած է հսկայական աշխատանք: Ընդունուած է Եւրասիական տնտեսական բարձրագոյն խորհրդի համապատասխան որոշումը: Ստորագրուած է Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Եւրասիական Տնտեսական Յանձնաժողովի միջեւ յուշագիր: Ստեղծուած են քառերկու աշխատանքային խմբեր,



Ռուսաստանի եւ Հայաստանի նախագահները ծաղկեպսակ կը դնեն Հայոց Ցեղասպանութեան զգոհերու յուշարձանին

որոնք աշխատանքներ են տանում անհրաժեշտ միջոցառումների եւ օրէնսդրական փոփոխութիւնների նախապատրաստման ուղղութեամբ: Ընդ որում, այսօր արդէն համաձայնեցուած են Հայաստանի նկատմամբ երկկողմ կարգով մի շարք կարեւոր արտօնութիւնների եւ առաւելութիւնների կիրառման մեխանիզմները, որոնք կիրառուած են Մաքսային Միութեան երկրների միջեւ փոխարարբերութիւններ-

րում», - ըսաւ Հայաստանի նախագահը:

Վլատիմիր Փութին իր խօսքի ընթացքին ընդգծեց այն տնտեսական առաւելութիւնները, որ կ'ստանայ Հայաստան Մաքսային Միութեան անդամակցութեան շնորհիւ: Ան յայտնեց, որ «Ռուսաստան չի հեռանալու Անդրկովկասից, առաւել ամրապնդելու է այստեղ իր

Շարք էջ 5

Թելեթոնի Ընթացքին Հանգանակուեցաւ Աւելի Քան 22 Միլիոն Տոլարի



Թելեթոնի արարտին կը յայտարարուի հանգանակուած գումարը

Նոյեմբեր 28-ին՝ Միացեալ Նահանգներու Գոհաբանութեան Օրոտայ առթիւ տեղի ունեցաւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի 16-րդ թելեթոնը, որու ընթացքին հանգանակուեցաւ 22 միլիոն 661 հազար 372 Ամերիկեան Տոլար:

Այս տարուայ թելեթոնը կայացաւ՝ «Դէպի Արցախ» նշանաբանին տակ, իսկ հանգանակուած գումարները պիտի ուղղուին Հայաստանը Լեռնային Ղարաբաղին կապող Վարդենիս-Մարտակերտ 116 քիլոմէթրոնոց ճանապարհի շինարարութեան:

Հիմնադրամի պաշտօնական հաղորդագրութեան համաձայն, «Թելեթոն 2013»-ի հանգանակութիւնները, ըստ երկիրներու, կը ներկայացնէ հետեւեալ պատկերը.

Ռուսաստան՝ 12,350,000 Ամերիկեան տոլար

Գ Ո Յ Ժ

Ս. Գ. Հնչակեան Կուսակցության Կեդրոնական Վարչութիւնը խոր կսկիծով կը գուժէ երբեմնի իր անդամին եւ ատենակապետին՝ Ընկ. ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻԻ մահը, որ պատահեցաւ 27 Նոյեմբեր 2013-ին, սրտի տագնապի հետեւանով:

Ողբացեալ ընկերը ամբողջ կեանք մը նուիրած է Ս. Գ. Հնչակեան Կուսակցութեան, ստանձնելով կարեւոր ազգային պաշտօններ: Երկար տարիներ անդամ եղած է կուսակցութեանս Լիբանանի Վարիչ Մարմին, ապա՝ Կեդրոնական Վարչութեան, եւ 1987-1990՝ նոյն մարմնի ատենակապետ:

50 տարիներ եղած է «Արարատ» օրաթերթի խմբագիր եւ ապա խմբագրապետ: Ստանձնած է բազմաթիւ պարտականութիւններ եւ իր տարիներու ծառայութեան ընթացքին սատարած է Սփիւռք-Հայրենիք մերձեցման աշխատանքին, որու համար ալ պարգեատրուած է բազմաթիւ շնորհակցանքով:

Ողբացեալ ընկերոջ յուշարկաւորութիւնը կատարուեցաւ Շարք, 30 Նոյեմբերին, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Անթիլիաս, Լիբանան:

Ս. Գ. Հ. Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Շարք էջ 18

Շարք էջ 5

ՐԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

Ինչո՞ւ հայաստանը Ուկրաինա չի դառնալ

ԱՐՄԷՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ

Հայաստանում մի առանձնակի ոգեւորութեամբ ու նոյնիսկ նախանձով են հետեւում Կիեւի փողոցներում ու յատկապէս Եւրամայդան կոչուող հրապարակում տեղի ունեցող զանգուածային բողոքի ակցիաներին, որոնք սկսուել էին Ուկրաինայի կառավարութեան կողմից Եւրամիութեան հետ Աստղացման համաձայնագիրը ստորագրելուց հրաժարուելու որոշման պատճառով: Չնայած նոյն որոշումը Հայաստանը փաստացի կայացրել էր դեռ երեք ամիս առաջ՝ Սեպտեմբերին, երբ նախագահ Սերժ Սարգսեանը կրեմլում յայտարարեց Մաքսային միութեանը Հայաստանի միանալու մտադրութեան մասին, սակայն միայն ուկրաինական իրադարձութիւնների ծաւալումից յետոյ մեզանում յանկարծ «յայտնագործեցին», որ իշխանութեան որոշման դէմ հակազդեցութիւնը չափազանց թույլ էր, ոչ համարժէք ու, ըստ էութեան, ամօթալի:

Հայաստանում ուկրաինացիների հակազդեցութեան նկատմամբ ոգեւորութիւնը, ծափահարութիւնները չափազանց ծանօթ են: Նոյն Չանսիութեամբ նրանք ծափահարում էին նաեւ մարզանցովիկաներով ու «մոլորատիւն կոկտեյլներով» գինուած՝ նախագահականը գրոհելու դուրս եկած Շանթ Յարութիւնեանին: Փաստօրէն, մեզ մօտ ամէնից լաւ կամ ծափահարելն ու կողքից «դուխ տալն» է ստացւում կամ ոչնչացնելու հակուածութեամբ քննադատելը: Բայց ամբողջ խնդիրն այն է, որ դրանցից որ մէկն էլ վերջնես, նոյն յուսահատեցնող պատճառն է. սեփական թուլութիւնը, անկարողութիւնը, յարմարուողականութիւնը, անկազմակերպուածութիւնը ուրիշի գործողութիւնները որակելու շղարշի տակ թաքցնելը:

Կամայ թէ ակամայ, Հայաստանում շատերն են սկսել մտածել, թէ ինչու այն, ինչ ստացւում է ուկրաինացիների մօտ, մեզ մօտ չի ստացւում բացարձակապէս: Կարելի է բերել առնուազն ութ պատճառ, որոնք հնարաւոր չեն դարձնում կոնկրետ եւրաին-տեզրացիոն քաղաքականութիւնից հրաժարուելու եւ նմանատիպ այլ խնդիրների համատեքստում համահասարակական ընդվզման ալիքի առաջացումը.

1. Տուեալ դէպքում Ուկրաինայի իրավիճակը շատ առանձնայատուկ է. այն հրաժարուեց ոչ թէ Աստղացման համաձայնագրի նախատրագրումից, ինչպէս Հայաստանը, այլ հենց վերջնական ստորագրումից: Ուկրաինայի նախագահն ու կառավարութիւնը մանկեղբոր, իրենց նահանջը այլեւայլ արհեստական բացատրութիւններով հիմնաւորելու շնորհիւն էին, ինչպէս Հայաստանի իշխանութիւնները: Սա հարուած էր ոչ միայն Եւրամիութեան, այլ նաեւ Ուկրաինայի հասարակութեան թիկունքից, որը սովորութիւն ունի չներելու նման արհամարհանքն իր նկատմամբ:

2. Ի տարբերութիւն Հայաստանի՝ Ուկրաինայի հասարակութիւնը բաժանուած է երկու մասի, որոնցից իւրաքանչիւրը երկրի զարգացման սեփական աշխարհընկալումն ունի: Երկրի արեւելեան արդիւնաբերական շրջանները կատարել կախուածութեան մէջ են

ուսական շուկաներից: Եթէ այն փակուեց ուկրաինական ապրանքների համար, որոնք դեռ չեն համապատասխանում եւրաստանդարտներին, առանց այն էլ կիսակաթուածահար տնտեսութիւնը վերջնականապէս կարող է մատնուել կրախի: Իսկ անհ երկրի արեւմտեան շրջանները կապուած են Արեւելեան Եւրոպայի հետ, եւ այնտեղ գործում է հասարակական շարաբերութիւնների բոլորովին այլ արժեհամակարգ, այլ են ընկալումները ժողովրդավարութեան, մարդու իրաւունքների մասին, եւ նրանց խորթ են իրենց արեւելեան հայրենակիցների վախերը ուսական ապտակներից: Այս հակասութիւնները հանգեցնում են ներհասարակական բախումների: Իսկ քանի որ գործող իշխանութիւնը վատահոլութեան քուէ է ստացել հենց երկրի արեւելեան շրջաններից ու ԵՄ աստղացումից հրաժարուելու որոշումն էլ կայացրեց, մեծ հաշուով, հենց այդ շրջանների բնակչութեան մեծամասնութեան ակնկալիքները բաւարարելու համար, իր դէմ հանեց ողջ կոնսերվատիւստ արեւմտեան հատուածին: Իրականում մենք ոչ թէ ուկրաինական ողջ հասարակութեան, այլ դրա միայն մի, իհարկէ՝ շատ պատկառելի մասի մոբիլիզացման հետ գործ ունենք, որն, ի դէպ, դեռ նարնջագոյն լեղափոխութեան ժամանակներից կուտակել է դրան հասնելու բաւարար փորձառութիւն: Իսկ Հայաստանի հասարակութիւնն այդ իմաստով չափազանց միատարր է իր ուսասիրութեան մէջ: «Ռսիոտի օրհնուած էն սհաթի» սինդրոմը չափազանց ամուր է նստած միջին հայաստանցու մտածողութեան մէջ: Բայց խնդիրը միայն պարզունակ ուսասիրութիւնը չէ: Անցած տարիներին Ռուսաստանը Հայաստանում իրականացրել է չափազանց ազդեալ տնտեսա-քաղաքական գաղութացման քաղաքականութիւն: Բնակչութեան ներկայիս կենսամակարդակը, ինչպիսին էլ այն գնահատուելի, ապահովում է ոչ թէ պետութեան կողմից իրականացուող տնտեսական, հարկապիւտեմային ու սոցիալական քաղաքականութեան միջոցով, այլ ուսական տրանսֆերտների, որոնց ընդհանուր տարեկան ծաւալն արդէն գերազանցում է Հայաստանի մէկ տարուայ պետական պիւտճէն: Հայաստանում չի կարող ուսական հակազդութեան ղէմ կամ լսուճն եւրոպական ինտեգրացման կրիտիկական զանգուած ի յայտ գալ այն հասարակութիւնից, որը շնչում ու արտաշնչում է Ռուսաստանից հոսող փողերով, որի մի մասն աշխատում է Ռուսաստանին պատկանող կամ նրա կապիտալով աշխատող ընկերութիւններում ու ձեռնարկութիւններում: Ռուսաստանում ծնող, գաւազ, հարազատ ունեցող անձը, ուսական ընկերութիւններից աշխատավարձ ստացող քաղաքացին ոչ մի դէպքում չի կտրի այն ճիւղը, որի վրայ նստած է: Հայաստանի հասարակութիւնը ներկայումս այն նոյն վիճակում է, ինչ Ուկրաինայի արեւելեան շրջաններինը: Հենց դա է պատճառը, որ նրանք, ըստ էութեան, դրսեւորում են գրեթէ միեւնոյն վարքագիծը:

3. Ի տարբերութիւն Ուկրաինայի, Հայաստանն ունի Լեռնային Մարզը Էջ 20

Իրավիճակից օգտուելու պահը

ԱՆԻ ՍԱՀԱԿԵԱՆ

Այսպիսով Ուկրաինայի իրադարձութիւնները ոչ միայն Հայաստանում ոգեւորութեան առիթ բարձրացրեցին եւ ոտքի հանեցին այլ հասարակութեան ակտիւ հատուածին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի եւ Մաքսային միութեանն անդամակցելու որոշման դէմ, այլեւ դրական անդրադարձ մտքերից հայ-ուսական վասալային դարձած շարաբերութիւններում: Թուճակ էր, թէ Պուտինը ոչ թէ Հայաստան էր գալիս, այլ Գիւմրի՝ աւելի կոնկրետ այստեղ տեղակայուած ուսական ռազմաբազա եւ նրա այցի նպատակն էլ բացառապէս դա էր, սակայն պուտինեան այցի աւարտից, համատեղ ու երկկողմ յայտարարութիւններից հասկանալի է դառնում, որ ՌԴ նախագահն այնուամենայնիւ բոլորովին անհաղորդ չէ հայաստանեան խնդիրներին եւ հնարաւորինս փորձել է շուտով դրսեւորուել Հայաստանի Մաքսային Միութեանն անդամակցելու որոշման դիմաց իր փոխհատուցման մէջ, այդպիսով թերեւս ոգեւորելով ՄՄ պոտենցիալ յաւակնորդ, բայց դեռ չկողմնորոշուած մնացած երկրներին եւ ցոյց տալով, թէ որքան բան կարող են դրանք ստանալ ՄՄ անդամակցելու դիմաց:

Հայ-ուսական բարեկամութեան նոր հաւաստիք ներկայացուող Մաքսային Միութեան անդամակցութեան տնտեսական առա-

ջին էֆեկտը, անշուշտ, գազի գինն է: Հրազդանում 5-րդ էներգաբլոկի բացման արարողութեան ժամանակ, որին Գիւմրիից հետեւում էին Սերժ Սարգսեանն ու Վլադիմիր Պուտինը, «Գազարոմ»-ի նախագահ Ալեքսեյ Միլլերը յայտարարեց, որ սահմանուելու է գազի նոր սակագին, եւ այսուհետ Ռուսաստանից Հայաստան առաքուող գազի գինը փոխկապակցուած է լինելու Ռուսաստանում գազի ներքին գների հետ, ու Հայաստանը գազ կը ստանայ Ռուսաստանի ներքին գնով: Յայտարարուեց նաեւ, որ «Հայուսագազարդ»-ը 100 տոկոսով դառնում է «Գազարոմ»-ի սեփականութիւնը, իսկ ընկերութեան Հայաստանի կառավարութեանը պատկանող 20% մասնաբաժինը փոխանցում է ուսական կողմին:

Աւելի ուշ, Սարգսեանի եւ Պուտինի ներկայութեամբ, վաւերացուեցին տարբեր ոլորտներում համագործակցութեան վերաբերեալ մօտ մէկ տասնեակ պայմանագրեր: Ստորագրուեց 12 կարեւորագոյն փաստաթուղթ՝ քաղաքական, տնտեսական եւ ռազմական համագործակցութեան, միջուկային անվտանգութեան, էներգետիկայի, կրթութեան եւ գթօսաշրջութեան հարցերին վերաբերեալ: Այս համաձայնագրերը կը լրացնեն աւելի քան երկու հարիւր միջպետական պայմանագրեր եւ համաձայնագրեր ընդգրկող մեր յարաբնութիւններ իրաւապայմանագրային բազան: Այս շաբաթ Հայաստանի

խորհրդարանը կը վաւերացնի ամբողջ ստորագրուած Ռազմատեսիսիկական համագործակցութեան զարգացման մասին պայմանագիրը, որը լայն հնարաւորութիւններ է բացում Ռուսաստանի պաշտպանական ձեռնարկութիւններում ներքին գներով սպառագիւնութեան եւ ռազմական տեխնիկայի ձեռքբերման համար: Դրանից յետոյ երկկողմ կամ ՀԱՊԿ ձեւաչափով այլեւս ոչ մի փաստաթուղթ չի մնայ, որը վաւերացուած չլինի հայկական կողմից:

Ինչ խօսք գազի գնի վերանայումը միայն կարող է դառնալ ՌԴ նախագահի նուէրը հայ հասարակութեանը, որը իր հետ կը բերի տնտեսական լուրջ խթաններ ու կ'ազդի նաեւ մի շարք թանկացումների տեմպի վրայ: Այս առումով Հայաստանն իբրեւ ամենահանգանդը Ռուսաստանի համար եւ ՄՄ-ի առաջին ծիծեռնակներից կարող է ճկուն քաղաքականութեան ղէպքում հնարաւորինս օգտուել պահից եւ օգուտներ քաղել ճիշդ եւ հաշուարկուած քաղաքականութեան միջոցով:

Պուտինի յայտարարութիւններից հասկանալի դարձաւ նաեւ նրա իրական հաւակնութիւնները եւ ի չիք այն մտապատրանքները, թէ վերջինի հետաքրքրութեան կրթակէտում գլխաւորապէս եւ յատկապէս Ուկրաինիան էր, եւ որ Հայաստանին ճնշելու, մեր թշնամուն գէնք վաճառելու, ՀՀ քաղա-

Էջ 20

Մասիս
ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԵՏՏՕՆԱԹԵՐԹ
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈՂԱՏԻԿԱՆ ԶՆՁԱԿԵԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ՝
ՏՕԲԹ ԱՐՇԱԿ ՂԱՉԱԼՃԵԱՆ

ՎԱՐՉԱՎԱՆ ԲԱԺԻՆ
ԼԵՆԱ ՄԱՆՈՒԿԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E-Mail: massis2@earthlink.net
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA \$50.00, \$80.00 (First Class)
Canada \$125.00 (Air Mail)
Overseas \$225.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid
at Pasadena CA.
Please Send Address Change To
MASSIS WEEKLY

Էջ 20

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ոստիկանութիւնում Յայտնուած Բոլոր Անձինք Ազատ են Արձակուել



Տեսարան՝ Ռուսաստանի մախաբահի Հայաստան կատարած այցի առթիւ տեղի ունեցած ցոյցէն

Ռուսաստանի նախագահի Հայաստան կատարած այցից առաջ, այցի ընթացքում եւ այցից չետոյ ոստիկանութիւնում յայտնուած բոլոր 110 անձինք ազատ են արձակուել:


Ոստիկանութիւնը յայտարարում էր, թէ երթի ժամանակ թող տրուած մի շարք իրաւախախտումների կատարողները մեկուսացուել են հաւաքի վայրից, վարչական պատասխանատուութեան ենթարկելու նպատակով բերուել ոստիկանութիւն եւ կարճ ժամանակ անց ազատ արձակուել:

Ոստիկանութեան յայտարարութիւնների մէջ չկայ 76-ամեայ էմմա Սահակեանին բաժին տանելու իրավիճակն արտայայտող որեւէ պաշտօնական ձեւակերպում:

էմմա Սահակեանը, որն արդեն մէկուկէս տարի է՝ իր սեփականութեան իրաւունքի վերականգնման պահանջով նստացոյց է անցկացնում Հայաստանի նախագահի նստավայրի դիմացի մայթին, Վլադիմիր Պուտինի այցից ժամեր առաջ, իր պատմելով, բռնի ուժով յայտնուել է ոստիկանութեան Արաբկիրի բաժնում եւ այնտեղ մնացել մօտ 7 ժամ:

Բացուեց «Հայաթ Փլէյս Երեւան» հիւրանոցը

Նախագահ Սերժ Սարգսեանի ներկայութեամբ Դեկտեմբեր 4-ին տեղի է ունեցել համաշխարհային ճանաչում ունեցող «Հայաթ Փլէյս» հիւրանոցային ցանցին պատկանող «Հայաթ Փլէյս Երեւան» հիւրանոցի բացման արարողութիւնը:



«Հայաթ Փլէյս Երեւան» մեր բացուած հիւրանոցը

Հայաստանի նախագահի պաշտօնական կայքէջի փոխանցմամբ՝ Սերժ Սարգսեանը շրջել է միջազգային բարձրակարգ հիւրանոցային ապրանքանիշի պահանջներին համապատասխան կառուցուած նորաբաց հիւրանոցային համալիրում, ծանօթացել իրականացուած ներդրումներին, ստեղծուած աշխատատեղերին եւ առաջարկուող ծառայութիւնների որակին:

Մայրաքաղաքում՝ Հանրապետութեան հրապարակի հարեւանութեամբ, կառուցուած «Հայաթ Փլէյս Երեւան» հիւրանոցի շինարարական աշխատանքները մեկնարկել են 2011 թուականին, աւարտուել՝ ընթացիկ տարում:

Սահակեանը փոխանցեց, որ պատրաստուում է ոստիկանութեան գործողութիւնները վիճարկել դատարանում:

Մի քանի ամիս առաջ վարչական դատարանը բաւարարել էր Լեւոն Բարսեղեանի հայցը՝ «Ճանաչել Լեւոն Բարսեղեանի՝ կարծիքն ազատ արտայայտելու, խօսքի ազատութեան, միաւորումներ կազմելու, խաղաղ հաւաքների ազատութեան, ազատ տեղաշարժուելու, անձնական ազատութեան եւ անձեռնմխելիութեան իրաւունքների խախտման փաստը եւ ոչ իրաւաչափ ճանաչել ոստիկանութեան Երեւանի վարչութեան կենտրոնական բաժնի ոստիկանների գործողութիւնները»:

Բարսեղեանը «Ազատութիւն» ռադիոկայանի հետ զրոյցում յայտնեց, որ նկատի ունենալով այս նախադէպը՝ ինքը եւ մի շարք այլ քաղաքացիներ, որոնք ապօրինի գտնուել են ոստիկանութեան բաժիններում, զանգուածային հայցեր են ներկայացնելու դատարան՝ ընդդէմ ոստիկանութեան:

«Ստիպուած կը լինեն որոշումներ կայացնել յօգուտ ցուցարարների», - ասաց Լեւոն Բարսեղեանը:

Շրջացի ժամանակ նախագահին ներկայացրել են, որ հիւրանոցի կառուցման ուղղութեամբ մինչ այժմ ներդրուել է շուրջ 15 միլիոն դոլար: 10 յարկանի եւ մօտ 7 հազար քառակուսի մետր ընդհանուր մակերեսով այս հիւրանոցում բացուել է 70 աշխատատեղ՝ 200 հազար դրամ (մօտ 500 դոլար) միջին աշխատավարձով:

«Հայաթ Փլէյս Երեւան» հիւրանոցի սեփականատէրն է «Ինտեռնարմ-Մ» ընկերութիւնը, հիւրանոցի կառավարումն իրականացնում է «Հայաթ Հոթելզ Բորփորէյն» ընկերութիւնը:

ՄԴՀԿ-ՌԱԿ Հայաստանի Վարչութիւններու Հանդիպում

Ռամկավար Ազատական կուսակցութեան Երեւանի գրասենեակում տեղի է ունեցել հանդիպում ՄԴՀԿ եւ ՌԱԿ Հայաստանի կազմակերպութիւնների վարչութիւնների միջեւ, որին մասնակցել են ՌԱԿ ատենապետ Յակոբ Աւետիքեանը, փոխատենապետ Կարէն Կակոբեանը, ատենադպիր Սուրէն Սարգսեանը, ինչպէս նաեւ ՄԴՀԿ ատենապետ Նարեկ Գալստեանը, փոխատենապետ Վազգէն Մեսրոպեանը, ատենադպիր Յարութիւն Բալաբանեանն ու քաղաքական դիւանի պատասխանատու Դմիտրի Մարտիրոսեանը:



ՄԴՀԿ-ՌԱԿ Հայաստանի Վարչութիւններու Հանդիպման ընթացքին

Երկու աւանդական կուսակցութիւնների ներկայացուցիչները նշել են, որ ՄԴՀԿ-ն եւ ՌԱԿ-ը ունեն Հայաստանի ներքին եւ արտաքին քաղաքականութեան հետ կապուած բազմաթիւ ընդհանուր տեսակէտներ:

Անդրադարձ է կատարուել Հայաստանի համար բացասական այնպիսի երեւոյթների, ինչպիսիք են սոցիալական անարդարութիւնը, օլի-

գոպոլիան եւ մենաշնորհները: Ձեռք է բերուել համաձայնութիւն համատեղել ջանքերն յանուն այդ բացասական երեւոյթների վերացման:

Հանդիպման ընթացքում խօսուել է նաեւ սիրիահայութեան, նրանց տրուող պետական եւ համազգային աջակցութեան վերաբերող հարցերի, ինչպէս նաեւ բանակ-հասարակութիւն առնչութիւնների մասին: Հանդիպման մասնակիցները պայմանաւորուել են հանդիպումները դարձնել պարբերական եւ քննարկել փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող հարցեր:

«Հայրուսգագարդի» Գործարքով Փակուեց 155 Միլիոն Դոլարի Պարտքը

«Հայրուսգագարդի» բաժնետոմսերի՝ Հայաստանի Հանրապետութեանը պատկանող 20 տոկոս մասնաբաժինը փոխանցուեց ռուսական «Գագարով»:

Հայաստանի նախագահի նստավայրում այսօր աւարտուեցին հայ-ռուսական բարձր մակարդակի բանակցութիւնները, որոնց արդիւնքներով ստորագրուեցին մի շարք ոլորտներում երկկողմ համագործակցութեան զարգացմանն ու խորացմանն ուղղուած փաստաթղթեր:

Մասնաւորապէս, ստորագրուեց Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Ռուսաստանի Դաշնութեան կառավարութեան միջեւ «Հայրուսգագարդ» փակ բաժնետիրական ընկերութեան բաժնետոմսերի առքուվաճառքի եւ հետագայ գործունէութեան պայմանների մասին համաձայնագիրը: Այս համաձայնագրով, փաստօրէն, «Հայրուսգագար-

դի» բաժնետոմսերի՝ Հայաստանի Հանրապետութեանը պատկանող 20 տոկոս մասնաբաժինը փոխանցուեց ռուսական «Գագարով»-ն, եւ ռուսական ընկերութիւնը, փաստօրէն, դարձաւ «Հայրուսգագարդի» 100 տոկոս սեփականատէրը:

Ստորագրման արարողութիւնից հետ շէ կներգետնիայի եւ բնական պաշարների նախարար Արմէն Մովսիսեանից հետաքրքրուեցինք՝ ինչո՞վ էր պայմանաւորուած Հայաստանի մասնաբաժինը ռուսաստանեան ընկերութեանը փոխանցելու որոշումը:

«Որպէսզի «Գագարով» ընկերութեան ներկայութիւնը աւելի շատ ապահովէնք, ու քանի որ, ինչպէս տեսաք, պայմանաւորուեցինք, որ զազը Հայաստանի Հանրապետութիւն կը ներկրուի ռուսական ներքին գներով՝ աւելացրած տրանսպորտային ծախսերը», - պարզաբանեց նախարարը, - «Եւ որպէսզի աւելի շատ շահ:

Քաղաքագետ.- «Մի Քանի Հարիւր Մարդու Բողոքի Ակցիաները Չեն Կարող Էապէս Փոխել Հայաստանում Տիրող Իրավիճակը

Մի քանի հարիւր մարդու բողոքի ակցիաներն այն քաղաքական զանգուածը չեն, որը կարող է էապէս փոխել Հայաստանում տիրող իրավիճակը: Այս մասին NEWS.am-ի թղթակցի հետ զրոյցում նշել է ԱՊՀ երկրների ինստիտուտի հայկական մասնաճիւղի տնօրէն Ալեքսանդր Մարկարովը՝ անդրադառնալով Դեկտեմբերի 2-ին Երեւանում ՌԴ նախագահ Պուտինի այցի եւ Մաքսային Միութեանը միանալու Հայաստանի իշխանութեան որոշման դէմ:

Նրա խօսքով՝ այդ բողոքի ակցիաները Շանթ Յարութիւնեանի կազմակերպած ակցիայի շարունակութիւնն են: «Հասկանալի է, որ մի քանի 100 մարդ, որոնք դուրս են եկել բողոքի ռուսաստանեան պետական գործչի այցի

դէմ, յայտնել են իրենց դիրքորոշումը: Բնական է, որ ոչ բոլորն են համաձայն Հայաստանի կողմից վարուող արտաքին քաղաքականութեան հետ», - ասել է Մարկարովը՝ յաւելելով, որ միւս կողմից, դա խոշոր հաշուով, փոքրաթիւ ակտիւիստներ են, որոնք հասարակութեան մէջ մեծ աջակցութիւն չունեն: «Մենք իրադարձութիւնների այնպիսի զարգացում չենք սպասում, որոնք տեղի են ունենում Ուկրաինայում: Իսկ այն, որ ժողովուրդն ընդվզում է, դա ցոյց է տալիս, որ մենք տարբեր տեսակէտներ ունենք», - ընդգծել է քաղաքագէտը:

Յիշեցնենք, որ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի Հայաստան այցի ժամանակ Երեւանում բողոքի երթ է տեղի ունեցել:

Իրաքի ԱԳ Նախարարի Այցը Երևան



Իրաքի և Հայաստանի արտաքին գործոց նախարարները միատեղ մալոյ ասուլիսի ընթացքին

Իրաքի արտգործնախարարի այցը նոր լիցք կը հաղորդի տարբեր բնագավառներում երկկողմ համագործակցության կարգապահմանը: Այս մասին, Դեկտեմբերի 3-ին, պաշտօնական այցով Երևանում գտնուող Իրաքի արտգործնախարար Հոշիար Ջեբարիի հետ հանդիպման ժամանակ նշեց Հայաստանի ԱԳ նախարար Էդուարդ Նալբանդեանը:

Ողջունելով հիւրին՝ նախարար Նալբանդեանը գոհունակությամբ նշեց, որ վերջին շրջանում երկու երկրների միջև փոխգործակցությունը զգալիորեն ակտիվացել է: Նախարար Նալբանդեանը ողջունել է նաև Հայաստանում Իրաքի դեսպանատան վերաբացումը:

Շնորհակալություն յայտնելով Երևան այցելելու հրավերի եւ ջանքերի մասին, Իրաքի նախարար Ջեբարին ասաց, որ Իրաքը ցանկանում է խորացնել համագործակցությունը բարեկամ Հայաստանի հետ և իր այցելության հիմնական նպատակը այդ ուղղության վերականգնումն է: Հոշիար Ջեբարին կարեւորեց հայ համայնքի ներդրումը Իրաքի վերակառուցման և բարգաւաճման գործում:

Հանդիպմանը հանգամանալից գրոց ծախսերը երկկողմ յարաբերությունների խթանման՝ քաղաքական երկխոսության ակտիվացման, միջազգային կազմակերպություններում համագործակցության սերտացման, իրաւապայմանագրային դաշտի ընդլայնման, առեւտ-

րատնտեսական, գիտական, կրթական, մշակութային բնագավառներում փոխգործակցության շուրջ: Նախարարները արձարծեցին երկու երկրների միջև մուտքի արտոնագրային ուժիմի դիւրացման հնարավորությունը:

Հիւրի խնդրանքով ՀՀ արտգործնախարարը ներկայացրեց Լեռնային Ղարաբաղի խնդրի խաղաղ կարգաւորմանն ուղղուած Հայաստանի եւ միջազգային հանրության ջանքերը:

Հոշիար Ջեբարին Էդուարդ Նալբանդեանին տեղեկացրեց Իրաքում կայունության եւ անվտանգության վերականգնման նպատակով իրականացրած ջանքերի մասին:

Նախարարները հանգամանալից գրոց ունեցան միջազգային եւ տարածաշրջանային մի շարք խնդիրների՝ Իրանի միջուկային ծրագրի շուրջ ձեռք բերուած պայմանաւորուածությունները, Սիրիայի հարցով ժնեւ-2 համաժողովի կազմակերպման վերաբերեալ:

Հանդիպումից յետոյ նախարարները ասորագրեցին Հայաստանի եւ Իրաքի արտաքին գործերի նախարարությունների միջև փոխադարձ համագործակցության մասին փոխըմբռնման յուշագիրը, որին հետեւեց համատեղ մամուլային ասուլիս:

Նոյն օրը նախագահ Սերժ Սարգսեանը ընդունել է Իրաքի Հանրապետության արտաքին գործերի նախարար Հոշիար Ջեբարիին:

Հայաստանը Եւ Եւրոպական Միութիւնը Ստորագրեցին Համատեղ Յայտարարութիւն

Հայաստանը եւ Եւրոպական Միութիւնը Վիլնիւսում, որտեղ անցկացուած էր Եւրամիութեան Արեւելեան գործընկերութեան գագաթնաժողովը, Համատեղ յայտարարութեամբ հանդէս եկան: Գագաթնաժողովում ելոյթ ունեցաւ Հայաստանի նախագահ Սերժ Սարգսեանը:

«Եւրոպական Միութիւնն ու Հայաստանը ունեն սերտ կապեր եւ վերահաստատում են իրենց յանձնառութիւնը աւելի զարգացնել եւ ամրապնդել Արեւելեան գործընկերութեան շրջանակներում փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող բոլոր ոլորտներում համապարփակ համագործակցութիւնը», - ասուած է Համատեղ յայտարարութիւնում:

«Յենուելով ընդհանուր ար-

ժէքների վրայ, երկու կողմերը յանձնառու են զարգացնել համագործակցութիւնը՝ ուղղուած ժողովրդավարական հաստատութիւնների եւ դատական համակարգի շարունակական բարելաւմանը, մարդու իրաւունքների եւ օրէնքի գերակայութեան խթանմանը, արդիւնաւէտ կառավարմանը, կոռուպցիայի դէմ պայքարին, քաղաքացիական հասարակութեան ամրապնդմանը, առեւտրի ու ներդրումների ընդլայնման համար միջավայրի հետազայ կատարելագործմանը, շարժունակութեան գործընկերութեան շարունակական իրականացմանը եւ ոլորտային համագործակցութեան ընդլայնմանը», - յայտարարուած են Հայաստանը եւ Եւրամիութիւնը:

«Հայոց Ցեղասպանութեան Ժխտման Բիծը Թուրք Ժողովրդի Վրայից Մաքրող Թուրք Ղեկավար Կը Լինի»

Թուրքական «Ռատիքալ» պարբերականի յայտնի սիւնակագիր Օրհան Քեմալ Ջենգիզ իր «Եթէ էրդողանը չզնայ Հայոց ցեղասպանութեան յուշարձան...» հրատարակման մէջ անդրադարձել է Թուրքիայի ղեկավարութեան կողմից Հայոց ցեղասպանութեան ճանաչման անհրաժեշտութեանը:

Թուրք սիւնակագիրը հրատարակման սկզբում լիջեցնում է 1970-ի Ապրիլի 7-ին Ֆեքմանիայի այն ժամանակուայ կանցլեր Վիլլի Բրանդի կողմից Լեհաստանում գործուած հրեաների յուշարձանին մեխակներ դնելը: «Մեխակները դնելուց յետոյ նա ուղղեց ժապաւէնը, մէկերկու քաջ է հետ գնաց եւ պատմութեան ընթացքը փոխող քաջ կատարեց: Նա կամաց-կամաց ծնկի իջաւ խոնաւ աստիճանների վրայ եւ ձեռքերը միացրեց առջեւում: Գետնին կուացած նա այդ քաջով բարձրացրեց իր ազգին», - գրել է Օրհան Քեմալ Ջենգիզը:

«Ռատիքալի» լրագրողը շարունակել է. «Իսկ մենք Բրանդի չափ խիզախ վարչապետ կ'ունենա՞նք: Մի օր Թուրքիայում Հայոց ցեղասպանութիւնը ժխտման բիծը այս ժողովրդի վրայից մաքրող մի ղեկավար կը լինի»:

Լրագրողը լիջեցրել է, որ Դաւութօղլուն մի կողմից Շուեյցար-

իային խնդրում է Հայաստանի հետ հարցերը կարգաւորել, միւս կողմից դիւանագիտական ճանապարհով փորձում է կանխել ժնեւում հայերի կողմից յուշարձանի տեղադրումը:

Ըստ Օրհան Քեմալ Ջենգիզի՝ Թուրքիայի փոխվարչապետ Բիւլենթ Աւրնչը յայտարարում է, թէ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին ընդառաջ աշխարհի բոլոր երկրներում ակտիւ դիւանագիտական աշխատանքներ են իրականացուել, Թուրքական պատմագիտական ընկերութիւնը 2015-ին ընդառաջ գրքեր է հրատարակում, Թուրքիայի ԱԳՆ-ը ամբողջ աշխարհին «Թուրքական թէգերը» տարածելու համար ջոկատներ է կազմել:

«Այս երկրում սպանուած, բռնաբարութիւնների ենթարկուած, անհամար տանջանքներով մահացածների առաջ յարգանքով խոնհարուելու քաջութիւն եթէ չենք կարողանում ցուցաբերել, գոնէ լուենք:

Եթէ չենք կարողանում Բրանդի պէս ծնկի իջնող եւ ազգի կտորուած պատիւը վերականգնող ղեկավար ունենանք, գոնէ հրաժարուենք աշխարհի մասշտաբով ժխտմամբ գովենք մեզ», - գրել է «Ռատիքալի» սիւնակագիրը:

2012թ.-ին Աշխարհում Ամենից Շատ Տուժել Եւ Բուլղարիայի Ու Հայաստանի Բնակիչները

2012թ.-ին աշխարհում ամենից շատ տուժել են Բուլղարիայի ու Հայաստանի բնակիչները: Այդ մասին են վկայում աշխարհի 143 երկրներում Gallup ընկերութեան կողմից անցկացուած հարցման արդիւնքները:

Բուլղարիայում հարցուածներին 39 տոկոսը 2012թ.-ին իր ապրած կեանքն անուանել է «տառապանք»: Հայաստանը 37 տոկոս արդիւնքով վարկանիշային աղիւսակում երկրորդ հորիզոնականում է: Առաջին տասնեակում են կամ-

չունեն:

«Աղբբեջանն ինքը ստեղծուել է 1918 թիւականին: Աղբբեջանցիները տարած քային պահանջներ ունեն նաեւ Հայաստանից, այլ երկրներից, սակայն դրա համար նրանք պէտք է նաեւ հիմնաւորու-

բողան, Հաիթին, Հունգարիան, Մադագասկարը, Մակեդոնիան, Իրաքը, Սիրիան ու Աֆղանստանը:

Gallup փորձագէտները հարցուածներին բաժանել են երեք կատեգորիայի՝ «բարգաւաճող», «պայքարող» ու «տառապող»՝ կախուած հաւաքած միաւորներից՝ ըստ 10 բալային սանդղակի, որի համաձայն գնահատել են իրենց ապագան:

Ամենաերջանիկները թուում են իսլանդիան, Ֆաթարը, Շուեյցարիան, Նորուեգիան, ԱՄՆ-ն, Շուեյցարիան:

ներ ներկայացնեն», - ընդգծել է Իրանի դեսպանը:

Յիշեցնենք, որ Նոյեմբերի 6-7-ին, տրակտորիստների հետ կապուած միջադէպից յետոյ փակուել էին աղբբեջանա-իրանական սահմանի անցակէտերը:

Իրանի Դեսպան. «Աղբբեջանի Տարածքային Պահանջները Բացարձակ Անհիմն Եւ»

Ընդհանուր սահմաններ ունեցող երկրների դէպքում յաճախ են միջադէպեր եւ սահմանի խախտումներ լինում, եւ աղբբեջանա-իրանեան սահմանին տեղի ունեցած վերջին միջադէպը առանձնապատուկ է: Այս մասին, Դեկտեմբերի 3-ին, մամուլի ասուլիսի ժամանակ յայտարարել է Հայաստանում Իրանի դեսպան Մոհամադ Ռեիսին՝ անդրադառնալով Իրան-Աղբբեջան սահմանային անցակէտերի փակման փաստին:

Նրա խօսքով՝ Իրանը լաւ յարաբերութիւններ ունի ինչպէս Աղբբեջանի, այնպէս էլ՝ Հայաստանի հետ: «Մենք ուզում ենք, որ այդ լաւ յարաբերութիւնները նպաստեն արդ երկու երկրների յարաբերութիւնների հաստատմանը», - ասել է դիւանագէտը:

Անդրադառնալով Իրանական լրատեսների վերաբերեալ աղբբեջանական կողմի մեղադրանքներին, Մոհամադ Ռեիսին նշել է, որ



Հայաստանում Իրանի դեսպան Մոհամադ Ռեիսի

Իրանը լրատեսներ չի ուղարկում որեւէ երկիր, եւ այդ մեղադրանքները մինչ օրս որեւէ կերպ չեն հիմնաւորուել:

Ինչ վերաբերում է Աղբբեջանի կողմից տարած քային պահանջներին, ապա, դեսպանի համոզմամբ, դրանք եւս որեւէ հիմք

ՌԱՔԷԼ ՏԻՆՔ՝ ՄԵՆՔ ՉԵՆՔ ՀԱՍԿՑԱԾ ԿՈՄԻՏԱՍԻ ԼՈՒԻԹԻՒՆԸ

ՄԱԳՕ ԱՐԵԱՆ

Հրանդ Տինքի ճանապարհը ամբողջ պատմութեան մը, պայքարի, օրհասի մը կրողն է, խօսակցիցս՝ Ռաքէլ Տինք:

Ամբողջ թուրքիոյ համար վաւերական դարձած Հրանդ Տինքի այրին այս անգամ Երեւան եկած էր Հրանդ Տինքի անունով վերակոչուած դպրոցի բացման հանդիսութեան ներկայ ըլլալու համար: Խաղող, ինքնավստահ, բայց մանաւանդ սիրով ու բարութեամբ լեցուն աչքեր ունեցող այս տիկինը ցաւի, մորմոքի, վիշտի, բողոքի, տեսիլքի եւ ապագայի մասին խօսեցաւ: Բայց ամէնէն կարեւորն այն էր, որ անոր մօտ Հրանդի գծած ուղիէն քալելու կամքն է, որ հարցազրոյցի ամբողջ տեւողութեան կարմիր թելի պէս կ'երեւի, սակայն առանց բարկութեան, առանց ոխի եւ մանաւանդ՝ դիմացինը լսելու ցանկութեամբ: Պոլսահայ տիկինը քանիցս նաեւ շեշտեց, որ ինք ճառախօս մը չէ: Տիկին Ռաքէլ հաստատեց, որ Հրանդ Տինքի մահը նոր էջ մը բացաւ յատկապէս թուրքիոյ տարածքին գտնուող հայերուն համար-իրմէ աւելի մեծ գործ տեսաւ իր մահը, ըսաւ Ռաքէլ Տինք եւ շարունակեց՝ «Թուրքերն ու քիւրտները որոշ շարժումի մը մէջ յայտնուեցան: Ամէն օր իսլամացուած, թրքացուած հայեր իրենց պատմութիւնները կը դրկեն մեզի: Ան նաեւ կը յայտնէ, որ դրական ինչ որ տեղաշարժ կայ ամբողջ թուրքիոյ մէջ, բայց նաեւ իրավիճակը ներկայացնելով ըսաւ. թէ՛ «տակաւին պարզ չէ, թէ՛ ինչ տոկոսային համեմատութեան վրայ ազդեցութիւն ունեցած են այս դէպքերը: Ըստ անոր՝ Մարդիկ սկսած են իրենց անցեալը փնտռել ու քաջութիւն մը մէջ տեղ եկած է: Անոնք սկսած են չվախնալ իրենց անցեալէն: Տակաւին շատեր իրենց նախնիներուն կրօնքը փնտռելու եւ գտնելու, ճանչնալու ու սորվելու ճիգին մէջ են: Նոյն այս իրականութեան շրջագիծին մէջ պէտք է դնել օրինակ Տիարպէքի-րի (Տիգրանակերտ) մէջ հայերէնի յատուկ դասընթացքի մը գոյութիւնը, որ այսօր հիմնուած է տեղւոյն քաղաքապետարանին հովանաւորութեամբ: Տիկին Ռաքէլ չի մոռնար մատնանշելու, թէ թուրքիոյ մէջ այս ամբողջ ընթացքը կը պահանջէ անկոտորում կամք:

Հրանդէն վերջ եւ Հրանդէն առաջ՝
-Հրանդէն յետոյ սկսան ազատ խօսիլ ու ատոր համար թուրքիոյ



մէջ շատ մը պատկերասփռուած յայտագրերու ընթացքին (Talk Show) մարդիկ սկսած են օգտագործել Հրանդէն առաջ ու Հրանդէն վերջ դարձուած քերական: Շատեր կը փորձեն դէպի անցեալ դառնալ, կ'ըսէ ան՝ նկատել տալով, որ շատեր սկսան իրենց գաւակները հայերէն սորվելու մղել: Այս բոլորը, ըստ իրեն՝ կ'ենթադրէ պայքար, քաջութիւն եւ կամք, որովհետեւ անոր ըսելով այն անձը, որ այսօրուան թուրքիոյ մէջ կ'ուզէ իր արմատներուն վերադառնալ, որոշ ճիգ մը պէտք է ընէ: Պատասխանելով թուրքիա ապրող հայաստանցիներու մասին հարցին, Տինք կ'ըսէ՝ Ես չեմ կարծեր, թէ այն հայերը, որ հեռացած են Հայաստանէն, ուրախութեամբ դիմած են այդ քայլին: «Ու նոյնիսկ կը մերժէ իմ լքել օգտագործած բառս ըսելով, թէ անոնք ոչ թէ լքած են այլ ստիպողաբար հեռացած: Անոնք Հայաստանէն հեռացած են պայմաններու բերումով, ու ես Պոլիս ապրող շատ մը հայաստանցիներու աչքերուն մէջ տեսած եմ կարօտ: Անոնք բոլորն ալ իրենց մայրենի հողին կարօտն ունին: Միշտ կուզեն, որ Հայաստանը աւելի լաւ վիճակներու մէջ յայտնուի, որ իրենք ալ շուտով վերադառնան:

Ոխը ճանապարհի չունի
Խօսելով Հրանդ Տինքի սպաննութիւնէն ետք տեղի ունեցող խմորումներուն ու յատկապէս հայաշխարհի մէջ արձանագրուած ընդհանուր իրավիճակին մասին խօսակցիցս ըսաւ՝ «Հրանդի մահէն ետք կը կարծեմ, որ շատեր ե՛ւ Հայաստանի ե՛ւ Սփիւռքի մէջ

սկսան Հրանդի աչքերով նայիլ հայութեան խնդիրներուն: Ու նաեւ ճիշդ չէ ըսել, որ Հրանդի սպաննութիւնէն ետք սփիւռքի կամ Հայաստանի մէջ ատելութեան նոր ուղի մը բացուեցաւ թուրքերուն հանդէպ: Եթէ եղան բողոքի ելոյթներ, ապա այդ մէկը բնական էր, ու ատիկա միայն բարկութեան մը արդիւնքն էր: Իմ կարծիքովս ոխը նոր սխալներու կ'առաջնորդէ, ու նոյն ոխը որ կրնայ Հրանդի սպաննութեան հետեւանք ըլլալ, պէտք է որ յաղթէ մեր կամքին»: Խօսելով Հրանդ Տինքի սպաննութեան գործը քննող դատական գործընթացին մասին՝ Ռաքէլ Տինք յատկեցուց, թէ ինչ պատճառներով իրենք (Տինք ընտանիքը՝ Ս. Ա) որոշեցին ընդհանրապէս քաշուիլ դատավարութեան ամբողջ ընթացքէն: Այս առումով ան ըսաւ՝ Ջարմանալի էր, որ դատարանը սպաննութեան գործին հետ կապ ունեցող անձերուն հետ ոչ մէկ քննութիւն բացաւ: Հրանդի սպաննութեան գործը մեծ ցանցի մը աշխատանքն էր, որուն գործադրութեան համար շատեր աչք խփեցին ու թոյլ տուին, որ այդ սպաննութիւնը կատարուի: Այդ ամբողջ գործընթացին հետ կապ ունեցող մարդոց թուրքիոյ կառավարութիւնը աւելի բարձր պաշտօններ տուաւ ու ձեւով մը վարձատրեց: Արդէն վեց տարի դատարանը ոչ մէկ լուրջ յետաքննութիւն ըրաւ եւ նոյնիսկ կառավարութեան վարչապետին կամ նախագահին կողմէ պատրաստուած տեղեկագիրները քննութեան չզերուեցան: Ըսեմ որ այդ տեղեկագիրներուն մէջ նշուած է, թէ՛ ոճիրը նախապատրաստուած աշ-

խատանք էր ու նաեւ հոն կը նշուի, թէ քանի-քանի պաշտօնեաներ կամ ոստիկաններ սպաննութեան օրը իրենց ըլլալիք տեղը չեն եղած ու այդպիսով ճանապարհ բացած, որ ոճրագործը հասնի դէպքին վայրը եւ սպաննէ Հրանդը: Այս տարիներու ամբողջ երկայնքին դատական մարմինը կը փորձէր ըսել, որ սպաննութեան գործը նախապատրաստուած չէր: Ու նոյնիսկ տեղ մը մեզի ճիգ կ'ընէր բացատրելու, որ Հրանդ Տինք ողջ է տակաւին ու սպաննուած չէ: Մենք ալ բնաւ պիտի չուզէինք խաղալիք դառնալ դատարանին ձեռքը: Նոյնիսկ առաջին շրջանին դատարանին կողմէ դէպքին հետ կապ ունեցող վկանները չեն երկայացուցեցան դատարան: Ոճիրին օրը եղած դէպքը այդքան ալ կարեւոր չէր, ինչքան նախքան սպաննութեան ամբողջ գործընթացը. «Եզրակացուց Ռաքէլ Տինք:

Հրանդ կամ սիրտ, կամ գնայ
Տիկին Տինք պատմեց նաեւ, թէ ինչպէս անձանթներ 2004 թուականին եկան Ակօսի շէնքի դրան մօտ ու սեւ ծաղկեպսակ դրին դռան առջեւ, «Սա արդէն կը նշանակէր, որ իրենք վճռած էին, որ պիտի սպաննեն Հրանդը ու բնաւ չեմ մոռնար, թէ ինչպէս կը վանկարկէին՝ Հրանդ դու մեր թիրախն ես, կամ Սիրէ կամ գնայ, Գիշեր մը ձեր դուռը պիտի գարնենք եւ այլ լոգունգներ: Ուրեմն այս ամբողջ գործընթացին կարեւորագոյն մասը սպաննութիւնէն առաջ երեւցած արարքներն էին, ու պարզ էր արդէն, որ Հրանդ կը հետապնդուէր, սակայն այս բոլորով հանդերձ պետական ապահովական մարմինները բնաւ չհետաքրքրուեցան անոր անվտանգութեամբ:

Ռաքէլ Տինք նաեւ յայտնեց, թէ այդ հաւաքներուն մասնակցած անձերուն նկարները ամբողջութեամբ ներկայացուած էին դատարանին, բայց իշխանութիւնները ոչինչ ըրին, որպէսզի այդ անունները բացառուին իմ կարծիքով այդ անուններուն բացառուածը կապ ունի այն պետական մտածողութեան հետ, որուն արմատները շատ խոր են եւ որոնց տակ թաքնուած է նաեւ ցեղասպանութիւնը իրականացուցած պետական վարչամեքենային իրական ուղեղը: Հարցումիս, թէ՛ ինք Հրանդին հետ բնաւ արժարժած է թուրքիային հեռանալու հարցը խօսակցիցս ըսաւ՝ այո, այդ հարցը քննարկած ենք, բայց Հրանդը ուր

Մար. Էջ 19

Bedros S. Maronian
818/500-9585

Siamanto B. Maronian
818/269-0909

SERVING THE COMMUNITY SINCE 1975
More locations and more ways to service your insurance and financial needs

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> • Life Insurance • Health Insurance • Group & Individual • Long Term Care • Disability 	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> • Estate Planning • Will & Living Trust • Full Annual Review • Mortgage Protection • College Planning 	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> • Workman's Compensation • Employee Benefits • Annuity • IRA • 401K & 403B
--	---	---

Seniors 65 & Up Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits

A.A. INSURANCE SERVICES

Insurance coverage can help you financially!
Ապահովագրութիւնը ԱՕհրաժեղտ է

Coverage & Protection should be on the top of your priority list.

ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ ԱՐԺԵՔ...

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ժողովուրդները, ինչպես նաև հայ ժողովուրդը, գոյատևել են իրենց հայրենիքով եւ դարերից աւանդաբար մշակոյթով: Մշակոյթ ասելով հասկանում ենք խօսակցական լեզուն, գիրն ու գրականութիւնը, հաւատալիքները, երաժշտութիւնը, երգն ու պարը, ծնողների վարքն ու բարքը, աւանդական սովորութիւնները, հոգեմտածողութեան արտացոլումները, հոգեբարոյական արժէքները, ճարտարապետութիւնը եւ այլն: Մշակութային արժէքները ձեւաւորում են դարերի բովանդակ հայրենիքում, որքան հին, այնքան աւելի հիմնաւորուած ու արմատացած, ինչպէս հայոց մշակոյթը հանց կաղնի փարթամ: Մշակոյթի արժանիքը իւրայատկութեան մէջ է, հնութեան մէջ է, ինչպէս երկար տարիներով պահուած անապակ գինին: Այո՛, մերը քաղցր է, անուշ է, վայ որ ջուր խառնուի, նա քացախ կը դառնայ...

Եկէք ջուր չխառնենք մեր անապակ գինուն, պահենք ու պաշտպանենք աչքի լոյսի պէս, հպարտօրէն ամէն տեղ հնչեցնենք մեր լեզուն, որն թանկագին է, հարուստ է, ոսկեղնիկ է, սա մենք չենք ասում, այլ օտար նշանաւոր լեզուաբաններն ու գիտնականներն են գնահատում: Բայց ցաւօք սրտի տե՛ս ինչպէս ենք վերաբերում մեր լեզուի հետ, ամէն տեսակ աղաւաղում ենք նոյնիսկ թաղման-յուրադարկաւորութեան մեր պաշտելի հայ մօր եւ հօր եւ հարագատի տիրուր առիթով կենսագրական բացատրութիւնները օտար լեզով ենք կատարում անհասկանալի մեծամասնութեան համար:

Ամէն անգամ, երբ տիրուր առիթով հարագատի, բարեկամի, ծանօթի, ճանաչուած մէկի յուղարկաւորութեան մասնակցում եմ յարգելու հանգուցեալի յիշատակը, արդարեւ տիրում եմ, որ կորցնում ենք նրան պակասելով մեր թուաքանակից, ցաւում եւ յուզում եմ, որ նա բաժանուած է մեզանից եւ չենք վայելելու նրա ներկայութիւնը:

Այո՛, մահը ցաւ է ու վիշտ, անխուսափելի, երբեմն նոյնիսկ փրկութիւն: Մարդը ինչո՞ւ է գալիս եւ ինչո՞ւ է գնում: Ո՛չ գալն է իր ձեռքը, ո՛չ էլ՝ երթալը, այսպէս է տնօրինուած, որպէսզի մարդ-արարածը աշխարհ գաջ եւ իր բաժին կեանքը ապրի ժամանակաւորապէս: Մահը ֆիզիքական կեանքի աւարտն է, սակայն ոչ թէ կատարուած գործի: Հայրենիքի, ժողովրդի, մշակոյթի եւ մարդկութեան համար կատարուած գործն անմահացնում է մարդուն յիշատակ-

ուելով սերունդէ-սերունդ: Մեր անմահ Յովհաննէս Թումանեանը շատ զեղեցիկօրէն բնութագրել է պարագան:

The police statement defended the overall use of force, saying that the protesters disrupted traffic and engaged in other "manifestations of illegal conduct."

Leaders of the protest denied any wrongdoing and demanded the immediate release of all detainees. "The authorities continue to resort to abuses against their citizens," charged Artur Sakunts, a prominent human rights campaigner.

VISIT YOUR APP STORE AND DOWNLOAD FREE



THE FIRST ARMENIAN NEWS OUTLET APP AVAILABLE FOR ALL YOUR DEVICES



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ Ի ՊԱՏԻ ԲԱԿՕ ՍԱՅԱԿԵԱՆԻ ԵՒ ՍԵՐԳԷՅ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ



Հիւսիսային Ամերիկայի առաջնորդը Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանն ու Թեմական Խորհուրդը գեղեցիկ գաղափարը յղացած էին շքեղ ճաշկերոյթով մը պատուելու այս օրերուն քաղաքս գտնուող Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեանն ու Լոս Անճելոսի մօտ Հայաստանի նորանշանակ աւագ հիւպատոս Սերգէյ Սարգիսովը:

Տօքթ. Արամայիս Պարոնեանի եւ Տիկին Նաթելլա Լալայեկեան-Պարոնեանի հիւրընկալութեամբ սոյն միջոցառումը տեղի ունեցաւ անցեալ Չորեքշաբթի, Նոյեմբերի 27ին, 2013, Պրայկէնքի առաջնորդարանի Գալաքճեան սրահին մէջ: Այստեղ հաւաքուած շուրջ 400 հրաւիրեալներու մէջ կը նշմարուէին տարբեր յարանուանութեանց եւ հայկական աւանդական կուսակցութիւններու ղեկավարներ, մերձակայ քաղաքներու քաղաքապետութեանց ներկայացուցիչներ, Հայաստանի Հիմնադրամի տեղական վարչութեան ատենապետ Անդրանիկ Պաղտասարեանն ու նոյն հաստատութեան նախկին ատենապետները, բարերարներ, մամուլի եւ այլ կազմակերպութեանց ներկայացուցիչներ:

ԱՄՆ-ի, Հայաստանի եւ Ղարաբաղի քայլերգներու յոսանակայ ունկնդրութեանն եւ Յովնան Սրբազանի կողմէ ողջոյնի խօսքէն ու սեղաններու օրհնութեանն ետք գործադրուեցաւ օրուան պատշաճ յայտագիր մը, ձեռնհաս հանդիսավարութեամբ Հայաստանի Համահայկական Հիմնադրամի նախկին ատենապետուհի Մարիա Մեհրանեանի:

Լոս Անճելոս գաւառի Շէրիֆ Լի Պաքան խօսք առնելով անդրադարձաւ Հայաստան եւ Արցախ

կատարած իր այցելութիւններու մասին եւ բարձր գնահատեց հիւրընկալ հայ ժողովուրդի բարեմասնութիւնները, որպէս շինարար, ստեղծագործ եւ ազատութիւնն ու անկախութիւնը սիրող ու մարտահրաշխները խիզախութեամբ դիմակայող ազգ:

Լոս Անճելոսի մօտ Հայաստանի նորանշանակ հիւպատոս Սերգէյ Սարգիսով իր ելոյթին մէջ շնորհակալութիւն յայտնեց իր անձին համար եղած պատուասիրութեան համար:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Բակօ Սահակեան իր խօսքին մէջ ամբաստանեց Ատրպէյճանին որ ահաբեկչական արարքներով կը խանգարէ երկրի խաղաղութիւնը: Ան միաժամանակ ազդարարեց «Արժանի հակահարուած տալ բոլոր անոնց, որոնք կը փորձեն խախտել մեր երկրի սահմանները»: Այնուհետեւ Արցախի նախագահը կոչ ուղղեց քաջայերբէլ Հայաստանի Համահայկական Հիմնադրամի ազգօգուտ միջոցառումները եւ յարեց. «Հիմնադրամը՝ եզակի կառույց է, որ միաւորում է բոլոր հայերին: Անհրաժեշտ է որ յարգանքով մօտենանք անոր»: Բակօ Սահակեանի ելոյթը դիմաւորուեցաւ յոսանակայ, երկարատեւ ծափողջոյններով:

Գործադրուեցան գեղարուեստական ճոխ յայտագիր մը, մասնակցութեամբ հանրածանօթ «Լիլիան» պարի համոյթի տարբեր միաւորներուն:

Գնահատելի, բովանդակալից եւ իր տեսակին մէջ ինքնատիպ ձեռնարկ մըն էր, որուն համար կ'արժէ շնորհակալութիւն յանձնախումբի ժրաջան անդամ-անդամուհիները:

ԱԻՍՏՐԻԱՅԻ ԶԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈՅՈՒՄ ՆՇՈՒԵՑ ՎԵՐՖԵԼԻ ԶԱՆՐԱՅԱՅՏ ՎԵՊԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 80-ԱՄԵԱԿԸ



Աւստրիայի հանրային ռատիոյի հանդիսութիւնների սրահում տեղի ունեցաւ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վէպի լոյս ընծայման 80-ամեակին նուիրուած տօնական միջոցառում: Կազմակերպիչներն էին՝ Աւստրիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը, Աւստրիայի Հայ Առաքելական եկեղեցական վարչութիւնը եւ Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտը: «40 օր-100 տարի. Ֆրանց Վերֆել-Գրականութիւնը որպէս պատմութեան հայելի» խորագրով միջոցառման կազմակերպմանը իրենց օժանդակութիւնը բերեցին Աւստրիայի հանրային ռատիոյի կազմում գործող Ռատիօ-Կուլտուրհաուսի խմբագրութիւնը, Աւստրիայի Ազգային գրադարանը, Աւստրիայի գրական ընկերութիւնը եւ «Ֆրանց-Վերֆել» կոմիտէն, յայտնում են ԱԳՆ մամուլի ծառայութիւնը:

Միջոցառմանը Աւստրիայում Հայաստանի դեսպան Արման Կիրակոսեանն արժեւորեց Վերֆելի վէպի պատմական եւ գեղարուեստական նշանակութիւնը հայ ժողովրդի հերոսական պայքարի յաւերժացման եւ այդ պայքարի առնչութեամբ համամարդկային արժեհամակարգի բարձր նշանոցի սահմանման տեսակետից: Աւստրիայի կառավարութեան անունից ներկայներին ողջունեց Աւստրիայի կրթութեան, արուեստի եւ մշակոյթի նախարարութեան կազմում գործող մշակութային վարչութեան տնօրէն, նախարարական խորհրդական Օլիվեր Հենհայելը: Ողջոյնի խօսքերով հանդէս եկան Կենտրոնական Եւրոպայում եւ Սկանդինավիայում Հայ Առաքելական եկեղեցու հայրապետական պատուիրակ Տիրան վարդապետ Պետրոսեանը, Վիեննայի Միլիթարեան միաբանութեան ղեկավար հայր Պօղոս Կոջանեանը, Պոտսդամի Յոհաննէս Լեիսիուս եւ Վուպպերթալի Արմին Թէօ Վեգներ ընկերութիւնների վարչութիւնների անդամ Համօ Պետրոսեանը:

Մուսա լեռան հերոսամարտի վերաբերեալ ձեռքբերուած նոր տեսանկյանների մասին գեղոյցով հանդէս եկաւ Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի տնօրէն դոկտոր Հայկ Դեմոյեանը: Վերֆելի վէպում հայոց Յեղասպանութեան պատմական իրողութեան արտացոլման խնդրի շուրջ տօնական ելոյթով հանդէս եկաւ Զայցբուրգի եւ Վիեննայում գործող Լոնտոնի համալսարանի դասախօս, գրականագէտ պրոֆեսոր դոկտոր Ռյուզիգեր Գյորները:

Միջոցառման երկրորդ մասում Հայոց ցեղասպանութեան, Ֆրանց Վերֆելի վէպի շուրջ կազմակերպուեց կրթական քննարկում եւ մտքերի փոխանակութիւն: Աւստրիայի գրական ընկերութեան եւ Ֆրանց-Վերֆել կոմիտէի նախագահ, գրող դոկտոր Մարիանա Գրուբերի, Ֆրանց-Վերֆել կոմիտէի փոխնախագահ, պատմաբան, ցեղասպանագէտ դոկտոր Արտեմ Օհանջանեանի, Աւստրիայի Ազգային գրադարանի Ձեռագրերի եւ հնատիպ հրատարակութիւնների հաւաքածօնի տնօրէն դոկտոր Անդրէաս Ֆինգերնագելի մասնակցութեամբ:



Աւստրիայի Ազգային գրադարանը տրամադրել էր նաեւ Ֆ. Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վէպի ձեռագրի բնօրինակը, որը ցուցադրուեց միջոցառման շրջանակներում: Վերֆելի վէպից հատուածների ընթերցմամբ հանդէս եկաւ աւստրիացի գրող, թարգմանիչ Հերբերտ Մաուրերը:

Հանդիսութեան վերջում Աւստրիայում Հայաստանի դեսպան Կիրակոսեանը աւստրիացի, գերմանացի, աւստրահայ եւ գերմանահայ շուրջ մէկ տասնեակ մտաւորականների յանձնեց Հայոց Յեղասպանութեան թանգարան-ինստիտուտի պատրաստած Վերֆելի վէպի լոյս ընծայման 80-ամեակին նուիրուած յուշամեդալներ, կատարուեց յատուկ այս միջոցառման համար հրատարակուած Վերֆելի դրոշմանիշով բացիկների մարման խորհրդանշական արարողութիւն:

Միջոցառմանը ներկայ էին Աւստրիայի կառավարութեան, մասնաւորապէս՝ արտաքին գերատեսչութեան, կրթութեան, արուեստի եւ մշակոյթի եւ այլ նախարարութիւնների պաշտօնատարներ, Հայաստանում Աւստրիայի դեսպան դոկտոր Ալոիս Կրաուտը, Վիեննայում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների անդամներ, մտաւորականներ, պատմաբաններ, գրականագէտներ, լրագրողներ, աւստրիահայ համայնքային կառույցների ներկայացուցիչներ:

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave Pasadena, CA 91104
Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Քետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

Ձեր Ծանուցումները Վստահեցէք «Մասիս» Շաբաթաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Massis2@earthlink.net

**ՀՈՂԸ ՄԱՐԴԿԱՆՑՈՎ Է ԴԱՌՆՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔ.
ՎԵՐԱԲՆԱԿԵՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆ ԱՐՑԱԽՈՒՄ**

ԱՆԻ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Արցախի ազատագրումից ի վեր վերաբնակեցումը դարձել է առաջնային նպատակներից մեկը: Այնուհանդերձ, շատերը չեն պատկերացնում՝ ինչ է դա, ինչպես է իրականացում եւ ինչ նկրտումներից ելնելով:

Այս հարցադրումների պատասխանները փորձեցինք ստանալ Արցախի Քաղաքապետի շրջանի վերաբնակեցումի կոորդինատորի պետ Ռոբերտ Մաթեոսեանից:

«Ի՞նչ է ֆայլեր պեմֆլեթները և հաստատվելու ցանկացող անձը:

«Առաջին հերթին ինձ է դիմում՝ հեռախոսահամարով, սոցցանցով, առերես: Ես իրեն բացատրում եմ, հարցնում՝ արդեօք գիւղատնտեսութիւն սիրո՞ւմ է, որպէսզի հասկանայ՝ ուր է գալիս, մենք հասկանանք՝ տուեալ անձն ինչ է ակնկալում: Միզուց է ներթափառվում վերաբնակիչը բժիշկ է կամ այլ մասնագիտութեան տէր, որ ներկայ դրութեամբ Քաղաքապետի անհրաժեշտ է: Յետոյ հրաւիրում եմ տուեալ մարդուն, մենք ծանօթացնում ենք նրան տեղանքին, գիւղերին, միասին փորձում հասկանալ՝ որտեղ կարող է բնակուել եւ ինչ է անելու: Յաճախ լինում է՝ մարդն ուզում է հողագործութեամբ զբաղուել, հող չունի կամ իր ծննդավայրում հողի մշակման հետ կապուած խնդիրներ ունի, դրա համար էլ ուզում է Քաղաքապետի վերաբնակիչ դառնալ:

«Մասնագիտութիւնը, ինչպէս հասկացայ, դեր խաղում է:

«Իհարկէ, մեզ պէտք են բժիշկներ, անասնաբույժներ, ուսուցիչներ, մանկավարժներ:

«Քաղաքապետի վերաբնակչին տուն տրու՞մ է:

«Եղած բնակֆոնդից յատկացնում ենք, սակայն իհարկէ լինում են դէպքեր, որ վերաբնակիչն ինքը պէտք է իր տունը կառուցի, մենք անշուշտ օգնում ենք շինանիւթերով:

«Ընթացիկ տարում Քաղաքապետի վերաբնակեցման ցուցանիշներով որ գիւղերն են առաջատար: - Թերեւս Իշխանաձոր ու Վահուհի գիւղերը:

«Վերաբնակեցումը միայն կառավարութիւնն է ֆինանսաւորում: - Ոչ, կայ «Քաղաքապետ» բարեգործական հիմնադրամ, բացի այդ էլ անհատներ, որ յաճախ չեն ուզում՝ իրենց անունը հրապարակենք:

«Պարոն Մաթեոսեան, համեստ անձնաւորութիւն լինելով, միշտ խուսափում է իր մասին պատմելուց, մինչդեռ նա վերաբնակիչներին հէնց իր կենսակերպով ու իր դիրքորոշմամբ օրինակ է ծառայում. նա տեղափոխուել է Արցախ 1995 թուականին, 1988-ից շարժման շարքերում է եղել: Երբ Արցախում սկսուել էր վերաբնակեցումը, սեփական նախաձեռնութեամբ մասնակցել է: Այստեղ է հանդիպել ապագայ տիրոջ՝ Յասմիրին, 1997-ին ամուսնացել են, ընտանիք են կազմել, այժմ էլ ունեն 3 երեխայ: «Երեխաներս այստեղ են ծնուել, նրանք քաղաքացի են»,-հպարտօրէն նշում է վերաբնակիչը, որն անկեղծօրէն կապուել է Արցախի հետ, բոլոր վերաբնակիչներին

անուններով գիտի, Քաղաքապետը լոր անկիւններն անգիր գիտի: Խոստովանում է՝ համոզուած է, որ վերաբնակեցումը շուտով տալու է իրենց ակնկալած փայլուն արդիւնքները:

«Վերաբնակեցման արդիւնքներն ակնառու էին Հակարի գիւղում:

«Գիւղն այդպէս է կոչուում համանուն գետի անունով: Կանգ առանք դպրոցի մօտ, որը վերանորոգում էր, կողքին՝ աշակերտները գնդակ էին խաղում: Մեզ դիմաւորեց տեղի դպրոցի տնօրէն Արմէն Մովսիսեանը՝ տեղեկութիւններ յայտնելով գիւղի եւ նրա դպրոցի մասին:

«Ե՞րբ էք սկսել աշխատել այստեղ՝ որպէս միջնակարգ դպրոցի տնօրէն:

«1998-ից: Վերջին անգամ դպրոցը ե՞րբ է վերանորոգուել:

«2002-2003-ին կապիտալ շինարարութիւն է եղել, հիմա ընթացիկ նորոգումներ ենք անում:

«Պետակա՞ն, թե՞ բարեգործական միջոցներով:

«Թէ՛ մէկը, թէ՛ միւսը: Օգնել է «Հայ կրթական հիմնադրամը»:

«Քանի՞ աշակերտ ունեւ:

«18 - Իսկ դպրոցում քանի՞ աշխատող կայ:

«17 - Ի՞նչ խնդիրներ են ծառայած դպրոցի առջև:

«Կարծում եմ՝ դպրոցի շէնքի կահաւորման խնդիր ունենք:

«Գրադարանի գրքերը քաւարա՞ն են աշակերտներին:

«Բաւականին մեծ գրադարան ունենք, իմ ուժերով եմ ստեղծել:

«Իսսակա՞ն գրականութեան պակաս է կայ:

«Հայ ու ռուս դասականներից գրեթէ ամէն ինչ ունենք, դասագրքեր էլ ստանում ենք պետական ծրագրի համաձայն:

«Դպրոցում կա՞ն խմբակներ:

«Իհարկէ, շախմատի ու կարտձեռի:

«Դպրոցն աւարտած Ձեր սաները որտե՞ղ են քարձրագոյն կրթութիւն ստանում:

«Վերջին տարիներին հիմնականում բանասէրներ ենք տալիս, մեր շրջանաւարտները սովորում են հիմնականում Երեւանի Պետական Համալսարանի բանասիրական ֆակուլտետում, նաեւ Արցախի համալսարանի տարբեր ֆակուլտետներում:

«Ուսուցիչները տեղաբնակ-նե՞ր են:

«Այո՛, բոլորը Հակարից են, միայն մէկ ուսուցիչ ունենք, որ կողքի գիւղից է: Մեր դպրոցի որոշ շրջանաւարտներ եւս դասաւանդում են:

«Գիւղում բոլորը վերաբնակիչներ են: Աշակերտների գիտակցութեան մէջ Հայաստան-Արցախ տարանջատում կա՞ն: Ղարաբա՛ղ բառն է արմատաւորուած, թե՞ Արցախ:

«Երեխաների գիտակցութեան մէջ արմատաւորուած է Հայրենիք բառը, նրանց մեծ մասն այստեղ է ծնուել, Արցախն էլ Հայաստան է ու նրանց հողն է:

«Դպրոցին մերձ արագիւր բոյն էր հիւսել: Տեղացիները ասացին՝ դա լաւ նշան է, նշանակում է՝ կենք կայ...»

**ԱՆՄԵՌ Է ԱՆ՝ ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑԸ
(Ե. Չարենցի մահուան-յիշատակի օրուան առիթով)**

ՄԱԳՕ ԱՐԵԱՆ

27 Նոյեմբերը Եղիշէ Չարենցի մահուան յիշատակի օրն է:

Այս առիթով Չարենցի մեծաթիւ երկրպագուներէն ներկայացուցչական խումբ մը մեղմ անձրեւին տակ փոստապատ էին հասնիլ անոր յուշաքանդակին մօտ ոգեկոչելու բանաստեղծին մահուան յիշատակի օրը: Գրողներ, իրենց ուսուցիչներուն հետ եկած մեծաթիւ աշակերտներ: Տեսակ մը տիրութիւն կար օդին մէջ:

«Չարենց չէր մեռած բնական պայմաններու տակ ու տակաւին չիրմաքար ալ չունեցաւ: Մեր ժողովուրդի ամէնէն վաւերական անուններէն, ամէնէն ուղենշային գրողներէն մին Եղիշէ Չարենցը ինք դարձաւ պատուանդան: Ու իմաստ ալ չունի արդէն իր չիրմաքար ունենալ-չունենալը պարզ անոր համար որ մեզմէ շատերուն հոգիներուն մէջ կ'ապրի անկէ մասնիկ մը:

«Պատանիները մեր ժողովուրդի յաւերժութեան բառը կը սորվին իրմէ: Աւելի երիտասարդները հայրենիք, երկիր, պետութիւն եւ յեղափոխութիւն բառերուն ամբարգրումը կը կատարեն ճանչնալով զինք: Աւելի մեծերը երբ խարխափումի, զոհողութեան, նուիրուելու եւ վեհագոյն գաղափարներուն տրուելու պահը գայ անգամ մըն ալ կը թերթեն անոր էջերը: Իսկ մեր աւագները իրենց կենքի աշնան հարց կուտան թէ ինչ էր իրենց ողջ մաքառումն ու գիրին կշիռը Չարենցի վաստակին ու մեծ նուիրումին դիմաց:

Այդպէս է Չարենցը «Արքայ Նայիրի» մեր ժողովուրդի նուիրուածութեան մեծագոյն անունը: Անուն որ այդպէս ալ մնաց անգերազանցելի ...»

«Չարենցը մրցակից չունի: Անոր բառը աւարտուն է եւ գիրի արժէքը կը չափուի այն իմաստութեամբ որ հողեղէն բառին հաւատարիմ այս քաղաքացի-բանաստեղծը իր խօսքը գործի վերածեց եւ մարտիրոսացաւ:

Միւրեց, կուռեցաւ, պախա-



րակեց, համոզեց, անգամ հայհոյեց ու քէն պահեց միայն ու միայն Երկիր Նայիրիին համար, որուն մասին անգամ մը գրելով ըսաւ. «Գուցէ սուտ է Նայիրին, Նայիրին չկայ... Գուցէ չուշ է միայն, ֆիկցիա, միֆ: Ուղեղային մորմոք. սրտի հիւանդութիւն...»:

«Չարենց իր որոնումներուն, պայքարին, գիրի եւ լոյսի ապաւէնով անցած ճանապարհին վրայ դարձաւ բոլոր-բոլորին բա-նաստեղծը:

«Մեր ժողովուրդի բոլոր հատուածներուն երկրպագութեան, սիրոյն եւ գուրգուրանքին արժանի է ան: Ներշնչման աղբիւր, ակունքներու վերադարձի իսկական ճամբայ:

«Ան է, որ գիտէ ճանապարհներու լեզուն եւ ան որ իր մէջ կը կրէ մեր էութեան, խիզախութիւն, անձուրութեան ամէնէն լուսաւոր հասկը...»

«Չարենց անմեռ է - Չարենցը վեհ է:

Յ.Գ. Վերջին տարիներուն ասմունքի վարպետ Ազատ Գասպարեան ու մեզմէ առ չաւէտ հեռացած Լեւոն Անանեան այս օրը դարձուցած էին Չարենցի յիշատակը խնկելու օր: Այսօր կը շարունակուի այս աւանդույթը եւ ուրախալի էր որ այս առիթով Չարենցի յուշաքանդակին առջև յարգանքի խօսք արտասանեց «Հայաստանի գրողներու միութեան» նախագահ էտուարտ Միլիտոնեան, որ այս առիթով յայտնեց թէ դէպի գրականութիւնն ու յատկապէս Չարենց տանող ճանապարհները պիտի շարունակուին ու մենք ազգովին այսօր աւելի քան որեւէ ժամանակ մեծապէս կարիքն ունինք անոր պատգամներուն ու լուսաւոր խօսքին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly
Enclosed a check for (one year)
* \$50,00 * \$100,00 (first class) for USA
\$ 100,00 (Air Mail) for Canada.
\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----
Address: -----
City: ----- State:----- Zip Code:-----
Country: -----
Tel :----- Fax :-----

ADHD-Ի ԱՆՏԱՃԱՆԱԶՄԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐՈՒ ԹԻՒՆ ՅՍՏԱԿ ՄԱԳԼՑՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐԱԾ Է

Ամերիկայի Միացեալ Նահանգներու մէջ գործող՝ Centers for Disease Control and Prevention կազմակերպութիւնը վերջերս յայտարարութիւն մը կատարած է երկրին մէջ ADHD-է տառապող փոքրերուն գծով: Ըստ յայտարարութեան, վերջին տասը տարիներու ընթացքին Միացեալ Նահանգներու մէջ ADHD-ի պարագաները 42 առ հարիւր համեմատութեամբ բարձրացած են: Ներկայիս 4-էն 17 տարեկան փոքրերու եւ պատանիներու 11 առ հարիւրը ախտաճանաչուած է ADHD-ով: ADHD-ի կամ Attention-Deficit/ Hyperactivity Disorder-ի ախտանշանները առնչուած են կեդրոնացումի եւ impulsivity-ի հետ:

Այս անհանգստութիւնը ի յայտ կու գայ փոքր հասակէն եւ անոր հետեւանքները կը դրսեւորուին փոքրիկի դպրոցական կեանքին մէջ: ADHD-է տառապող մարդիկ դժուարութիւն կ'ունենան երկար ժամանակ կեդրոնանալու նոյն առարկային վրայ, յաճախ չեն կրնար ուշադրութիւն դարձնել մանրամասնութիւններու եւ անուշադրութեան սխալներ կը կատարեն իրենց դպրոցական, աշխատանքային (չափահասներու պարագային) եւ այլ վարժութիւններու մէջ: Նոյնիսկ խաղալու ժամանակ, փոքրերը դժուարութիւն կ'ունենան իրենց կեդրոնացումը պահելու: Այս անձերը դժուարութիւն կը դիմագրաւեն նաեւ ունկնդրելու երկար դասախօսութիւններ կամ կեդրոնացած մնալու խօսակցութեան պարագային: Հետեւաբար անոնք չեն կրնար ճիշդ ձեռով կազմակերպել ու ամբողջացնել իրենց պարտականութիւնները: Իրենց անուշադրութեան պատճառով կը մոռնան կատարելու իրենց պարտականութիւնները: Դպրոցական աշակերտներու պարագային բաւական նշմարելի է այդ մէկը,

որովհետեւ անոնք յաճախ կը կորսնցնեն իրենց պատկանող իրերը (մատիտ, պաշտակ, գիրք): Այս բոլորը կապուած է անհատին impulsivity-ին հետ, որը դժուարութեամբ կը կառավարուի ADHD-է տառապելու պարագային:

ADHD-ն նաեւ ունի չափազանց աշխուժութեան (hyperactivity) հետ կապուած ախտանշաններ, ինչպէս՝ անհանդարտութիւն, ձեռքերու եւ ոտքերու մշտական աշխուժութիւն, երկար ժամանակ նստած մնալու դժուարութիւն, լռութիւն պահանջող վարժութիւններու մաս կազմելու դժուարութիւն, չափազանց շատ խօսուածքներ, կառք սպասելու եւ համբերելու դժուարութիւն, օրէնքի խախտում, եւ այլն:

Վերոյիշեալ ախտանշանները կրնան ըլլալ մեղմ կամ չափաւոր, միջակ եւ լուրջ: Բոլոր պարագաներուն, յստակ է որ ADHD-է տառապող փոքրերը եւ չափահասները մեծ դժուարութիւններ կը դիմագրաւեն իրենց դպրոցական եւ աշխատանքային կեանքին մէջ: Կարգ մը մարդիկ կրնան նոյնիսկ դուրս մնալ դպրոցէն:

ADHD-ի ախտանշանները կը յայտնուին մանկութեան ընթացքին՝ 12 տարեկանէն առաջ: Ախտանշանները վերապահուած չեն միայն դպրոցական կեանքի, այլ նաեւ ի յայտ կու գան ընկերային եւ ընտանեկան կեանքին մէջ:

Ըստ հոգեբանական հետազոտութիւններուն այս անհանգստութիւնը առկայ է բոլոր մշակութիւններու մէջ: Փոքրերուն մօտաւորապէս 5 առ հարիւրը կը տառապի ADHD-է, իսկ չափահասներու պարագային այս համեմատութիւնը կը նուազի 2,5 առ հարիւրի: Մինչեւ օրս, այս անհանգստութեան պատճառները կը մնան անյայտ: Անհատին միջավայրը, ծինները եւ կեանքի պայմանները հիմնական գործօններ են անհանգստութեան զարգացման մէջ:

Համեմատութեամբ նուազեցնել սրտի հետ կապուած հարցերու հետեւանքով մահանալու հաւանականութիւնը, իսկ 11 առ հարիւրով՝ քաղցկեղէ մահանալու վտանգը: **ՆԱՅԻՐԻ ՇՈՐՃԵԱՆ**

ՊԻՍՏԱԿԸ ԿՐՆԱՅ ՅԵՏԱԶԳԵԼ ՄԱՐԸ

New England Journal of Medicine ամսաթերթին մէջ հրատարակուած ուսումնասիրութեան համաձայն՝ օրական դրութեամբ պիտակեղէն սպառելը կրնայ երկարել կեանքը՝ առողջ պահելով մարմինը եւ միտքը: Բրիտանական քաղցկեղի հաստատութեան եւ Հարվըտ համալսարանի կողմէ կատարուած այս ուսումնասիրութեան մաս կազմած են 120,000 անձեր, իսկ ուսումնասիրութիւնը տեւած է շուրջ 30 տարի:

Նախապէս կատարուած ուսումնասիրութիւններ ցոյց տուած են թէ պիտակը կրնայ նուազեցնել կարգ մը անհանգստութիւններու, ինչպէս՝ երկրորդ տեսակ շաքարախտի, աղիքի քաղցկեղի եւ սրտի կաթուածի վտանգները: Նաեւ, կրնայ օգտագար դառնալ Alzheimer's-ի, Dementia-ի եւ ընդհանրապէս ուղեղի աշխատանքներուն հետ կապուած հարցերու կանխարգիլման:

Հետաքրքրական է, որ այս ուսումնասիրութիւնը նաեւ ցոյց կու տայ թէ պիտակեղէն սպառելը առնչուած չէ գիրութեան հետ: Նշենք, որ հետազոտութեան արդիւնքներուն համաձայն, պիտակեղէնը կրնայ 29 առ հարիւր

ԻՆՉ Է ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ

Ինքնութիւնը անհատի մը իր անձին նկատմամբ ունեցած առնչութիւններն են: Ինքնութեան կերտման մէջ մեծ դեր ունին պատկանելիութեան զգացումը, ինքնագիտակցութիւնը, ինքնաճանաչումը, կեանքի պայմանները, միջավայրը եւ անհատին բնաւորութիւնն ու առաջնահերթութիւնները: Ինքնութիւնը ընդհանուր բառով է, որ կը ներառէ անհատին սեռային, ազգային, մշակութային, ընկերային ինքնութիւնները ինչպէս նաեւ անձի մը արժանապատուութիւնը եւ գոյութեան զգացումը:

Դժուար է ապրիլ առանց ինքնութեան, սակայն կարգ մը պարագաներու մարդիկ տանեակ տարիներ ապրելէ ետք է, որ կը կերտեն իրենց ինքնութիւնը: Ոմանց պարագային ինքնութեան հարցը կը մնայ անլուծելի եւ կը վերածուի բարդոյթի (complex):

Ինքնութեան մասին ամէնէն արդի տեսութիւնները կը շեշտեն որ ինքնութեան կերտումը, հակառակ նախապէս գործող տեսութիւններուն, երկար գործընթաց է որ կը սկսի անհատին ծնած օրէն եւ կը տեւէ մինչեւ մահ: Ինքնութեան զգացումի առաջին օրինակներէն է՝ կապուածութիւնը՝ ծնողքին, ըն-

տանիքին, միջավայրին: Աւելի ուշ՝ ինքնութեան մաս կը կազմեն անձի մը անկախութիւնը, տեսակէտները եւ պատկանելիութեան զգացումը: Ինքնութեան համար ամէնէն կարեւոր տարիները պատանեկութեան տարիներն են, որովհետեւ այս շրջանին է, որ մարդիկ կ'ենթարկուին մտային, հոգեկան, ֆիզիքական եւ զգացական նշմարելի ելեւէջներու: Այս շրջանին է, որ տեղի կ'ունենան հիմնական փոփոխութիւններ թէ՛ ֆիզիքական եւ թէ՛ հոգեկան գետնի վրայ: Այս փոփոխութիւնները մեծ դեր կը խաղան ինքնութեան կերտման մէջ, հետեւաբար՝ պատանեկութեան տարիները շատ կարեւոր են այս գծով:

Մարդիկ որոնք ի վերջոյ կը կերտեն առողջ ինքնութիւն աւելի դիւրութեամբ կրնան յարմարիլ կեանքի պայմաններուն եւ առանց տագնապի ենթարկուելու կը դիմագրաւեն ընկերային եւ անձնական կեանքի մէջ տեղի ունեցող փոփոխութիւնները: Իսկ անոնք, որոնք զանազան պատճառներով չեն յաջողիլ կերտել առողջ ինքնութիւն, ոչ միայն կը տառապին զգացական գետնի վրայ, այլ նաեւ՝ հակամէտ կ'ըլլան առնելու սխալ որոշումներ եւ կ'ըլլան շուարած վիճակի մէջ:

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ԴՊՈՒԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐԴՈՑ ՀԱՄԱՐ ՄԱՏԱՆԻՆԵՐ ԵՒ ԱՊԱՐԱՆՋԱՆ

Ճափոնցի գիտնականները վերջերս ստեղծած են մատանիներ եւ ապարանջան մը, որ ոչ միայն գեղեցիկ է՝ այլ նաեւ օգտակար՝ հաղորդակցութեան համար: Հաղորդակցութեան կարողութիւնը 21-րդ դարու կեանքի ամէնէն կարեւոր սիւներէն մէկն է: Ներկայիս աշխարհի տարածքին կը գործեն յատուկ դպրոցներ՝ լսողութեան եւ խօսակցութեան դժուարութիւններ ունեցող անձերու համար: Այս գծով, ամէնէն կարեւոր գիտելի է նշաններու լեզուն կամ Sign Language-ը: Սակայն, այս դրութիւնը կ'օգնէ հաղորդակցելու միայն այն մարդոց հետ, որոնք կրնան օգտագործել նշաններու լեզուն: Այլ խօսքով, լեզուի հաղորդակցութեան դժուարութիւններ ունեցող մարդիկ չեն կրնան հաղորդակցիլ լեզուն իբրեւ հաղորդակցութեան միջոց օգտագործող մարդոց հետ:

Ճափոնի մայրաքաղաք՝ թոք-իոյի մէջ գտնուող Ասիոյ համալսարանի մասնագէտներ ստեղծած են մատանիներու եւ ապարանջաններու հետաքրքրական տարբերակներ, որոնք խօսակցութեան եւ լսողութեան դժուարութիւններ ունեցող անձերու օգտագործած նշանները կը վերածեն բառերու: Այս բառերը կ'արտայայտուին գրաւոր կամ ձայնաւոր՝ ապարանջանին միջոցով:

Վեց մատանիներ, որոնք կը գետեղուին անհատին մատներուն վրայ, շարժումներու միջոցով կրնան նշաններ վերածել բառերու, որոնք կ'արտայայտուին ապարանջանին վրայ գտնուող screen-ին կամ speaker-ին միջոցով: Հետաքրքրական է, որ կարելի է նախօրոք շարժումներ արձանագրել այս մատանիներուն միջոցով եւ շարժումները պիտակել համապատասխան բառերով:

<p>ՎԵՐԱՆՈՐՈՎՈՒՄ</p>	<p>ST. GREGORY ARMENIAN CHURCH Geragos BANQUET HALL OF PASADENA</p>	<p>NEWLY REMODELED</p>
<p>Now ready to host your</p> <ul style="list-style-type: none"> • Wedding • Baptism • Anniversaries • All other happy & sad events. • հարսանիք • Մկրտութիւն • Տարեդարձ • և ամէն ուրախ ու տխուր առիթներ: 		
<p>ՎԱՏԷ 562-715-8730 ՎԱԿԷ</p>		
<p>Լաւագոյն և յարմարագոյն գիւնդով ձեզ կ'սպասարկենք</p>		

ՇԻՋԵՑԱՒ ԱՆՁՈՒԳԱԿԱՆ ԸՆԿ. ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻՆ

Մարուսակուած էջ 1-էն

պուժի, ելոյթի, յողուածի եւ կամ խմբագրականի մէջ:

Ընկ. Նայիրի, ամբողջապէս հաւատարմութեամբ կուսակցութեան գաղափարախօսութեան միանշանակ նշմարտութեան: Ան հպարտ էր, որ իր կուսակցութիւնը, իր կազմութեան առաջին օրէն, ազատագրական պայքարի իջած էր ոչ միայն ընդդէմ իր ժողովուրդի գոյութեան սպառնացող Օսմանեան իշխանութեան, որ կը ծրագրէր անէացնել հայ ժողովուրդը իբրեւ ազգ եւ հայրենիք, այլ միջոցաւ լուծուած համարելու համար Հայկական Հարցը, այլ նաեւ՝ ընդհանրապէս, բոլոր բոնատիրական վարչակարգերու դէմ, պահանջելով իրենց ստրկացուած ժողովուրդներու ազատագրութիւնը եւ շահագործուող ընկերային դասակարգերու կեանքի պայմաններու բարելաւումը:

Ընկ. Նայիրի հպարտ էր, որովհետեւ՝

Իր կուսակցութիւնը առաջինը եւ վերջինը հանդիսացած էր Իբրքիստի՝ 1911-ին կազմակերպած Սելանիկի թրքարոյ համապամարի մէջ հայոց դէմ ծրագրուող ճեղասպանութեան ֆողագերծողը: Ափսոս, որ այդ ֆողագերծումը ազգային կառոյցներու կողմէ բերահաւատութեամբ դիմաւորուեցաւ, որ այլապէս, կարելի կընար դառնալ առաջին առնելու ոչ միայն Հնչակեան 20-ներու նահատակութիւնը, այլ նաեւ, հիմնականը՝ ժողովուրդներու պատմութեան մէջ իր նմանը չի տեսնուած՝ հայ ժողովուրդի դէմ գործադրուելու կոչուած տեղահանութեան, ազգային հողատարածներու բոնագրաման եւ ճեղասպանութեան:

Իր կուսակցութիւնը անվհատ, խիզախ ու հաւատարմ մնաց պայքարի առաջին դիրքերու վրայ, այն պնդանականութեամբ, որ արդի Թուրքիա պարտ էր նախնայ, դատապարտել իր նախորդներուն՝ Իբրքիստի կողմէ իրագործուած 1915-ի ճեղասպանութիւնը եւ հատուցել հայ ժողո-

վուրդին, անոր վերադարձնելով իր բոնագրաման հայապատկան պատմական հողերը:

Իր կուսակցութիւնը, միշտ, իր հայրենիքի պաշտպանութեան դիրքերու վրայ կանգնած էր, ամբողջապէս սատար հանդիսանալով անոր կառոյցներու առաւել գորացման, բանիւ եւ գործով:

Իր կուսակցութիւնը լրիւ կը հաւատար Հայրենիք-Սփիւռք կապերու սերտացման բարեբեր արդիւնքին, սկսած Խորհրդային բովանդակ ժամանակաշրջանէն մինչեւ մերօրեայ Ազատ ու Անկախ Հայաստանը: Հպարտ էր իր ընկերակցական հայրենիքով, որուն՝ Արեւելի հորիզոնին վրայ տեսիլք ունեցան Հնչակեան 20-ները:

Գերագանցապէս հպարտ էր ներկայ, մերօրեայ Հայրենիքով ու Արցախեան ազատագրումով, որոնք նուիրագործումներն էին մեր ազգի դարաւոր երազին: Տարակոյս չի կար անշուշտ, որ մեր ազգային երազը իր լրումը պիտի ստանար մեր բոնագրաւեալ հողերու վերադարձով դէպի իր իրաւատիրոջ՝ հայ ժողովուրդին:

Իր կուսակցութիւնը մեր ժողովուրդի միասնութեան մէջ կը տեսնէր ազգիս լինելիութեան սատար բոլոր գրաւակները:

Ժողովրդավարական վարչակարգի մէջ կը գտնէր հայրենիքի գորացումը, բարգաւաճումը, մշտական յառաջխաղացքն ու անպարտելիութիւնը:

Երկար տարիներու վրայ տարածուած իր խմբագրութեան ժամանակաշրջանը՝ ընկ. Նայիրի ծառայեցուց ազգային, ընկերային, հայրենասիրական ֆողափայլեան եւ պահանջատիրական հիմնախնդիրներու կապակցութեամբ Ա.Դ. Հնչակեան կուսակցութեան բանաձեւած դիրքորոշումներու, բացատրութիւններու, հիմնաւորումներու եւ ընդհանրացումներու գնահատելի աշխատանքին, աշխատանք՝ որ մեծ ներդրում կը համարուի Սփիւռքահայ վերջին անելի փան կէս դարու պատմութեան մէջ:

Հողը թեթեւ գայ վրադ եւ յիշատակդ վառ մնայ բանկագին ընկ. Ժիրայր Նայիրի:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Հիբանանահայ ծանօթ լրագրող, խմբագիր, հասարակական գործիչ, հրապարակախօս, գիրքերու հեղինակ, կուսակցական անխոնջ մշակ եւ տասնեակ տարիներու ղեկավարի ամենաբարձր պաշտօններ վարած **ԸՆԿԵՐ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ-ԹՈՍՈՒՆԵԱՆԻ** անակնկալ մահուան առթիւ շրջանիս բոլոր կառոյցներու անունով մեր խորագրաց վշտակցութիւնները կը յայտնենք հանգուցեալի աչրիին՝ **Տիկ. Մարիին, զաւակներուն, ընտանեկան համայն պարագաներուն եւ զաղափարի ընկերներուն:**

Հողը թեթեւ գայ վրան:

Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի Վարիչ Մարմին

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ-ԹՈՍՈՒՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով **Նոր Սերունդ Մշակութային Միութեան** Վարչութիւնն ու անդամները իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն **ՆՍՄՄ-ի** հիմնադիր անդամի աչրիին, զաւակներուն եւ ընտանեկան բոլոր պարագաներուն:

ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ-ԹՈՍՈՒՆԵԱՆԻ մահուան տխուր առիթով **Տէր եւ Տիկ. Թոմաս եւ Ալին Եթերեան** եւ զաւակներ կը յայտնեն իրենց խորագրաց ցաւակցութիւնները, հանգուցեալի համայն հարագաններուն եւ պարագաներուն, յատկապէս զաւակին՝ **Տօքթ. Յակոբ Թոսունեանին** եւ անոր ընտանիքին:

VA Print Media

Book Printing • Hard Covers • Year Books
Restoration of Old Books & Bibles

Նոր Գիրքերու Տպագրութեան եւ
Հին Գիրքերու Նորոգութեան Համար
Հեռաձայնէ՛՜ ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ



Vahe Atchabahian

1743 E. Elizabeth St. • Pasadena, CA 91104
Tel: 626-793-6220 • Cell: 626-354-5924
vamedia@yahoo.com • www.vaprintmedia.com

ՆԱԽԱՃԱՇ

Կազմակերպութեամբ՝
Կիլիկեան Բարեգործական Միութեան

**Տեղի կ'ունենայ
Կիրակի 8 Դեկտեմբեր, 2013
Առաւօտեան ժամը 10:00-էն սկսեալ
Raffi's Restaurant
3887 E. Sierra Madre Blvd.
Pasadena, CA 91107**

**Հասոյթը պիտի յատկացուի Հալէպի
Կիլիկեան Ճեմարանին**

Մուտքի նուէր՝ \$15

ՎԱՐՁՈՒ ՏՈՒՆ

**PALM SPRINGS ԱՐՉԱԿՈՒՐԴԻ ԳՆԱՅՈՂ
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ**

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուում լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մեծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թեմիսի խաղաղաշտ, կանաչազարդ փիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

Վարձման գներն են՝

Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Մէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Մէկ ամսուայ համար՝	\$ 1450

**Մանրամասների համար հեռաձայնել՝
(818) 246-0125**

Ինչո՞ւ Հայաստանը Ուկրաինա չի դառնայ

Շարունակում էք 2-էն

Ղարաբաղի հիմնահարց, որտեղ վաղուց արդէն հանդէս է գալիս ոչ թէ որպէս պատերազմում յաղթած ու պահանջատէր, այլ պատերազմից ցանկացած գնով խուսափելու խնդիր հետապնդող կողմ: Իր անվտանգութեան ողջ համակարգը Հայաստանը կառուցել է հենց Ռուսաստանի քաղաքական ու ռազմական օժանդակութեան կամ աւելի ճիշդ՝ դրանց խոստումների վրայ: Ռուսները յարձակողական գէնք վաճառեցին Ատրպէյջանին՝ ցոյց տալով, թէ ինչ վիճակում կարող է յայտնուել Հայաստանը, եթէ փորձի դուրս գալ այդ համակարգից: Ռուսները վախեցրին ոչ միայն իշխանութիւններին, այլ նաեւ հասարակութեանը: Պատերազմից ու դրանում ռուսական օգնութիւնից զրկուելու վախը հասարակութեանը վերածեց հնազանդ գանգուածի, որը որպէս հաւաքականութիւն ցանկացած գործողութիւն ձեռնարկելուց առաջ արդէն մտածում է՝ իսկ եթէ մի պահ Ռուսաստանը բաց թողնի Ատրպէյջանին... Այդ վախը հիմա դարձել է բնագոյնի: Արտաքին մարտահրաշխանների դէմ իմունիտետը կորցրած հասարակութիւնը դատապարտուած է կախուածութեան: Նման հասարակութիւնը չի կարող ըմբոստանալ այն ուժի դէմ, որի հետ է կապում իր անվտանգութիւնը՝ թէկուզ առանց որեւէ իրական երաշխիք կամ հիմք ունենալու:

5. Աշխարհաքաղաքական բեւեռների միջեւ ընտրութիւն կատարելը քաղաքական հարց է, այն հասարակութեանը հասու դարձնելը՝ քաղաքական ուժերի հիմնական խնդիրն ու առաքելութիւնը: Բայց Հայաստանում քաղաքական առաջնորդութիւն գոյութիւն չունի, հետեւաբար նաեւ քաղաքական ազնիւ խորհրդատուութիւն էլ գոյութիւն չունի: Քաղաքականութիւնը, թէ որպէս ոլորտ, թէ որպէս մարդկանց ամբողջութիւն եւ թէ որպէս գործօն, ամբողջապէս ասպագողափարականացուած է, մարզինալացուած եւ ստորացուած: Քաղաքացիական շրջանակները հասարակութեանն առաջնորդելու պոտենցիալ չունեն: Նրանք յայտնուել են կոլապսային այնպիսի վիճակի մէջ, որից հնարաւոր չէ հեշտութեամբ դուրս գալ: Քաղաքականութեան բացակայութեան պատճառով ի յայտ եկած վակիւումը ձգտում է լրացնել քաղաքացիականութիւնը, որն անհնար է:

Քաղաքացիականութիւնն ուժեղ է ուժեղ քաղաքական համակարգի առկայութեամբ: Դրա բացակայութեամբ այն ընդամէնը կարող է հասարակական ռեզոնանսել առաջացնել, այն էլ ինքնցիտայի ուժով: Այն չի կարող քաղաքական կողմնորոշման պատասխանատուութիւն ստանձնել:

6. Հայաստանում առաւել եւս չկան արեւմտամէտ ու իրապէս լիբերալ քաղաքական ուժեր, որոնք կարող են յստակ քաղաքական օրակարգ ձեւաւորել ու ճնշում բանեցնել իշխանութիւնների վրայ: Բոլոր այն վախերը, որոնք բնագոյնաբար ունի հասարակութիւնը ռուսական գործօնից, արդէն գիտակցուած մակարդակով ունի այսպէս կոչուած քաղաքական դաշտը կամ այն, ինչ մնացել է դրանից: Պատահական չէ, որ գրեթէ բոլոր խորհրդարանական ուժերը բարձրաձայն, թէ անադմուկ վաւերացրին Սերժ Սարգսեանի՝ Սեպտեմբերի 3-ին կայացրած որոշումն իբրեւ Հայաստանի համար ընտրուած, ստեղծուած իրավիճակում լաւագոյն տարբերակ կամ որպէս չարեաց փոքրագոյն: Առանց քաղաքական օրակարգի ձեւաւորման եւ պայքարի քաղաքական մեթոդների առաջարկման՝ հասարակական մոբիլիզացիա տեղի ունենալ չի կարող: Իսկ Ուկրաինայում քաղաքական կեանքը եռում է, թելադրող քաղաքականութիւնն է, այնտեղ ուժեղ են արեւմտամէտները, ռուսամէտները, կենտրոնամէտները, բայց ամենակարեւորը՝ նրանք կան ու նրանք են հասարակական կեանքի վրայ ազդող հիմնական գործօնները: Այս հասցրում Հայաստանը եւ Ուկրաինան համեմատուելու ոչ մի եզր չունեն:

7. Հայաստանի հասարակութիւնն արդէն համոզել է, որ անգամ համազգային նշանակութեան հիմնահարցերի նկատմամբ է կորցրել հետաքրքրութիւնն ու շահագրգռութիւնը: Միակ դաշտը, որտեղ դեռ հնարաւոր է իրականացնել հասարակութեան մոբիլիզացիան, սոցիալական ահազանցող իրավիճակն է: Այս հասարակութիւնը չի կարողանում ինքնուրոյն անգամ տարրական սոցիալ-կենցաղային խնդիրներ լուծել: Հացի խնդիր լուծող հասարակութիւնը չի կարող ոտքի կանգնել յանուն ինչ-որ եւրաինտեգրացման քաղաքական կուրսի, հակառուսական տրամադրութիւնների, համազգային արժէքների, եթէ իհարկէ, բնագոյնաբար չի զգում որ լինել-չլինելու խնդրի առաջ է

Իրավիճակից օգտուելու պահը

Շարունակում էք 2-էն

քացիներին իրենց երկրում ծաղր ու ծանակի ենթարկելու ու մեր հանդէպ այլ նուստացուցիչ վերաբերմունքի միջոցով նա ընդամէնը մեսիջ էր յղում Ուկրաինային: Պոլտինը յստակ ընդգծեց, որ իր հաւակնութիւնները տարածուած են առհասարակ կովկասի վրայ, այդ տարածքում նաեւ Հայաստանի: Նա յայտարարեց, որ Ռուսաստանը մտադիր է ամրապնդել իր դիրքերը Հարաւային կովկասում:

«Ինչ վերաբերում է Անդրկովկասին, ապա Ռուսաստանը երբեք չէր պատրաստուում հեռանալ այստեղից»:

Ռուսաստանը տարածաշրջանում դիրքերն ամրապնդելու է՝ «յնուրեւ յայն դրականի վրայ, որ մեզ հասել է մեր նախնիներից, յնուրեւ յայն տարածաշրջանի բոլոր երկրների հետ ունեցած լաւ յարաբերութիւնների վրայ, այդ թւում՝ «Հայաստանի»»: Ինչ խօսք ՀՀ նախագահի ելոյթն էլ ամբողջութեամբ այս տրամադրութիւնների

մէջ էր, մեծ եղբօրը ցուցադրելու, թէ ինչ ունենք իր համար, որքան նպաստաւոր աշխարհագրական դիրք ունենք, բայց յանուն արդարութեան Սերժ Սարգսեանը մեր երկրի արժանիքներ թուարկելիս ի վերջոյ իր խօսքը եզրափակեց այն նկատաւումով որ պատրաստ է որոշակի զիջումների յանուն մեր երկրի անվտանգութեան երաշխաւորի:

«Անթոյլատրելի է, որպէսզի, մեր հասարակութիւնների նոյնիսկ ամենաաննշան մասի մօտ ծագի կասկածանքի զգացումներ, այլատեսացութեան կամ ծայրայեղականութեան դրսեւորումներ: Մենք երկու ժողովուրդներ ենք, ովքեր մէջք-մէջքի յաղթել են Հայրենական Մեծ պատերազմում, պարտաւոր ենք յայտարարել ֆաշիզմի ցանկացած դրսեւորման նկատմամբ զրոյական հանդուրժողականութեան մասին: Դա հակասում է մեր հասարակութիւնների եւ ոգուն, ե՛ւ արժեհամակարգին, դա հակասում է Մեծ Յաղթանակի փառքին եւ ժառանգութեանը»:
«ՀԱՅԵԼԻ»

կանգնած: Այդպիսի հասարակութիւնից մեծ պահանջներ ունենալն առնուազն ծիծաղելի է:

8. Հայաստանում մտաւորականութիւնը, աւելի ճիշդ դրա մեծ մասը շարունակում է մնալ խորհրդահայատակ եւ պահպանել սովետական մտաւորականի մտածողութիւնն ու կենսակերպը: Այն երբեք այդ քառակուսուց դուրս չի եկել եւ չնայած անկախ պետականութեան անցած 20 տարներին, մինչեւ վերջ չի մարսել անկախութեան, ինքնիշխանութեան եւ պետականութեան արգասիքները, հնարաւորութիւնները, հետեւաբար իրեն էլ պատասխանատու չի համարել թէ այդ արժէքները պահպանելու եւ թէ դրանք հասարակական գիտակցութեան մէջ ամրապնդելու համար: Դիմագուրկ հարմարողականութիւնն այս կատեգորիայի ամենաբնորոշ առանձնատկութիւնն է: Այն ի գորու չի եղել եւ հիմա էլ չէ ազդելու հասարակութեան վար-

քագծի վրայ, ոգեշնչելու նրան, տալու ազատութեան եւ այն իրացնելու զգացողութիւնները, հասարակական մտածողութիւն բերելու նոր կաղապարագերծ գաղափարներ եւ արժէքների ու նպատակների համար պայքարելու ներքին մղումներ: Հայ մտաւորականութիւնը ազգի ինքնապահպանութեան հիմնական առանցքը շարունակում է համարել գոյապահպանութիւնը, որն ապահովագրուած է համարում միայն ռուսական շինելի ներքոյ: Քանի դեռ մտաւորական նոր սերունդը ճեղքում չի կատարել հաստատուած ու լայն արմատներ գտած այս համընդհանուր կարծրատիպերի շարդման առումով, այս շերտը ունակ չի լինելու արձագանքելու հասարակական պահանջներին եւ քաղաքական ուժերի ինքնուրոյն պայմաններում ինչ-որ իմաստով ստանձնելու այդ պահանջատիրութեան առաջնորդումը:
«ՀԵՏՔ»

«ՔԱՋ ՆԱԶԱՐ»
ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ
Ամէն Կիրակի երեկոյեան ժամը 10:00-ից 12:30
Կլէնտոյլի 380-րդ կայանից

INNOVATIVE
Designs  **Manufacturing, Inc.**

